



With financial support
from the Russian Federation



Empowered lives.
Resilient nations.


ԼՈՒՈՒ ՄԱՐԶՈՒՄ
ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

2019-2020 թթ.

ԼՈՌՈՒ
ՏՈՒՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Այս հետազոտությունը պատրաստել է Լոռու տուրիզմի զարգացման և հետազոտության կենտրոնը: Կենտրոնը բացվել է «Ինտեգրված գյուղական զբոսաշրջության զարգացում» ծրագրի շրջանակում, որը ֆինանսավորվում է Ռուսաստանի Դաշնության կողմից, իրականացվում ՄԱԿ-ի զարգացման ծրագիր կողմից՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության հետ համատեղ: Յուրատեսակ կառույց է, որը տեղի երիտասարդների ներգրավման միջոցով միտում ունի կրթելու տեղական համայնքներին և հնարավորություն ընձեռելու նրանց մասնակցել գյուղական զբոսաշրջության զարգացմանն ուղղված աշխատանքներին: Կենտրոնի աշխատակիցները քրտնաջան աշխատում են ստեղծելու նոր զբոսաշրջային պրոդուկտներ:

***Գծապատկեր 1. Լոռու զբոսաշրջության զարգացման
 հնարավորությունների հետազոտության
 նպատակները***



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Լոռու մարզում զբոսաշրջության զարգացման հնարավորությունների
հետազոտություն.....էջ 3
2. Լոռու մարզի ընդհանուր բնութագիր.....էջ 5
3. Լոռու մարզի ներկայացվածությունը զբոսաշրջության շուկայում...էջ 6
4. Քաղաքային զբոսաշրջություն.....էջ 16
5. Արկածային զբոսաշրջություն.....էջ 19
6. Առողջարանային զբոսաշրջության ներուժը.....էջ 22
7. Գյուղական զբոսաշրջություն/Ագրոտուրիզմ.....էջ 24
8. Ավանդական խոհանոց. Գաստրոնոմիկ զբոսաշրջություն.....էջ 26
9. Էկոզբոսաշրջություն.....էջ 31
10. Մարզի հոգևոր-մշակութային կյանքը. Պատմամշակութային
հուշարձաններ.....էջ 33
11. Լոռու մարզի հյուրանոցային տնտեսությունները.....էջ 34
12. Լոռու մարզում մի քանի տնտեսությամբ տուրեր կազմակերպելու
նախապայմաններ.....էջ 48


ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Լոռու տուրիզմի զարգացման և հետազոտության կենտրոնը 2019 թ.-ին կատարել է մի շարք հետազոտություններ , որոնց նպատակն է եղել բացահայտել Լոռու մարզի զարգացման հնարավորությունները զբոսաշրջության ոլորտում, գնահատել մարզի զբոսաշրջային ռեսուրսները:

Հետազոտությունների ընթացքում հարցում կատարեցինք ՀՀ քաղաքացիների և մարզ ժամանած զբոսաշրջիկների շրջանում, հասկանալու համար՝ մարզում զբոսաշրջային ծառայությունների ակտիվացմանը խոչընդոտող խնդիրները: Նաև կենտրոնի հետազոտության արդյունքները համեմատեցինք 2014 թ.-ին <<Զբոսաշրջության և երիտասարդների ձեռներեցության զարգացման ծրագրի>> կողմից իրականացրած հետազոտության արդյունքների հետ, պետք է նշել, ցավոք, խնդիրների գերակա մասը դեռ առկա է ,իսկ մի քանիսն էլ դադարել է այլևս խնդիր լինելուց: Ահա այն խնդիրները, որոնք դեռ առկա են.

Գծապատկեր 2. Լոռու մարզում զբոսաշրջային ծառայությունների ակտիվացմանը խոչընդոտող խնդիրները



Ինչպես նաև դուրս ենք հանել Լոռու մարզի ՈԻԺԵՂ կողմերը, ըստ <<Լոռու մարզի 2017-2025 թթ-ի զարգացման ռազմավարության>> վերլուծության, որը մեզ կօգնի մարզի զբոսաշրջային ոլորտի զարգացման գործում:

- Խոշոր քաղաքների առկայությունը, որպես ծառայությունների մատուցման, կրթության և առողջապահական կենտրոններ
- Թումանյանի տարածաշրջանը, որպես լեռնարդյունաբերական աճի բևեռ
- Տաշիրի տարածաշրջան, որպես անասնապահության և կաթի վերամշակման աճի բևեռ
- Հանգստի կազմակերպման համար Բարենպաստ բնակլիմայական պայմաններ, անտառների մեծ տեսակարար կշիռ
- Քաղցրահամ և հանքային ջրերի բավարար պաշարներ
- Մեծաքանակ հուշարձաններ ու կոթողների առկայություն, այդ թվում ընդգրկված ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում:
- Գյուղատնտեսության (մասնավորապես անասնապահության) համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ
- Վանաձոր քաղաքում չօգտագործվող արտադրական տարածքների առկայություն
- Մարզի չօգտագործվող հանգստյան գոտիների առկայություն
- Մարզի չօգտագործվող հանգստյան գոտիների առկայություն.
- Ստեփանավան և Օձուն համայնքների օդանավակայանների շահագործումը կարող է դառնալ մարզի զբոսաշրջության զարգացման գրավականներից մեկը:
- Մարզի գրեթե ողջ տարածքով անցնող երկաթուղու առկայություն
- Էկո, ագրո, էթնիկ տուրիզմի զարգացմանն ուղղված ծրագրեր
- Վանաձորի ճոպանուղու և մարգադաշտի վերակառուցում

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Տարածքը - 3798 քառ.կմ

Մարզկենտրոնը - ք. Վանաձոր

Բնակչությունը, 2019թ. -
215.5 հազ. մարդ այդ թվում՝
քաղաքային - 128,8 հազ. Մարդ
գյուղական - 88,6 հազ. Մարդ
/ըստ ՀՀ Վիճակագրական
Կոմիտեի տվյալների/

Քաղաքային համայնքներ - 8
Գյուղական համայնքներ - 105



ՀՀ Լոռու մարզն ընդգրկում է Սպիտակի, Ստեփանավանի, Տաշիրի, Թումանյանի, Գուգարքի տարածաշրջանները, որոնք իրենց համայնքներով ներկայացված են ստորև:

Գուգարքի տարածաշրջան - (1 քաղաքային՝ Վանաձոր և 21 գյուղական՝ Ագնվաձոր, Անտառամուտ, Անտառաշեն, Արջուտ, Բագում, Գուգարք, Դարպաս, Դեբեդ, Եղեգնուտ, Լերմոնտովո, Լեռնապատ, Հալլավար, Ձորագետ, Ձորագյուղ, Մարգահովիտ, Շահումյան, Վահագնաձոր, Վահագնի, Փամբակ, Քարաբերդ, Ֆիդլետովո համայնքներ)

Թումանյանի տարածաշրջան - (4 քաղաքային՝ Ալավերդի, Թումանյան, Ախթալա, Շամլուղ և 27 գյուղական Աթան, Ահնիձոր, Այգեհատ, Արդվի, Արեւածագ, Աքորի, Դսեղ, Թեղուտ, Լորուտ, Ծաթեր, Ծաղկաշատ, Կաճաճկուտ, Կարմիր Աղեգի, Հագվի, Հաղպատ, Ճոճկան, Մարց, Մեծ Այրում, Մղարթ, Նեղոց, Շամուտ, Շնող, Չկալով, Զիլիգա, Քարկոփ, Քարինջ, Օձուն համայնքներ)

Սպիտակի տարածաշրջան - (1 քաղաքային՝ Սպիտակ և 20 գյուղական՝ Արեւաշող, Գեղասար, Գոգարան, Լեռնանցք, Լեռնավան, Լուսաղբյուր, Խնկոյան, Ծաղկաբեր, Կաթնաջուր, Հարթագյուղ, Դուրսալի, Մեծ Պարնի, Նոր Խաչակապ, Շենավան, Շիրականուտ, Զրաշեն, Սարալանջ, Սարահարթ, Սարամեջ, Քարաձոր համայնքներ)

Ստեփանավանի տարածաշրջան - (1 քաղաքային՝ Ստեփանավան և 18 գյուղական՝ Ագարակ, Ամրակից, Բովաձոր, Գարգառ, Գյուլագարակ, Լեջան, Լոռի Բերդ, Կաթնաղբյուր, Կողես, Կուրթան, Հոբարձի, Հովնանաձոր, Յաղդան, Պուշկինո, Սվերդլով, Վարդաբլուր, Ուրասար, Ուռուտ համայնքներ)

Տաշիրի տարածաշրջան - (1 քաղաքային՝ Տաշիր և 19 գյուղական՝ Ապավեն, Արծնի, Բլագոդարնոյե, Դաշտաղեմ, Լեռնահովիտ, Կաթնառատ, Չյունաշող, Ձորմուտ, Մեղովկա, Մեծավան, Մեղվահովիտ, Միխայլովկա, Նովոսելցովո, Նորաշեն, Պաղաղբյուր, Պետրովկա, Պրիվոլնոյե, Սարատովկա, Սարչապետ համայնքներ)

**ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ
ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ**

Լոռու մարզի զբոսաշրջության ոլորտում առկա խնդիրների հաղթահարման և ոլորտի հետագա զարգացման համար, անհրաժեշտություն առաջացավ ուսումնասիրություն իրականացնել հայաստանյան ներգնա զբոսաշրջությամբ զբաղվող տուրօպերատորների շրջանում, ինչպես նաև ընտրել համեմատական մի մարզ, որպեսզի հասկանանք մեր հարևան մարզերի հետ մեր թերություններն ու առավելությունները: Այս անգամ ընտրեցինք Տավուշի մարզը, քանի որ տարիներ առաջ <<Զբոսաշրջության և երիտասարդների ձեռներեցության զարգացման ծրագրի>> կողմից կատարված հետազոտությունում համեմատական մարզ ընտրված է եղել Շիրակը:

Տարիներ առաջ Տավուշի մարզը ըստ Ազգային վիճակագրական ծառայության տրամադրած ցուցանիշների, ծառայությունների ծավալով զգալիորեն զիջում էր Լոռու մարզին, սակայն 2015-2018 թթ. ցուցանիշները բավականին փոխվել են: Լոռու և Տավուշի մարզերը համարվում են ՀՀ ամենախոնավ մարզերը: Մարզերը աչքի են ընկնում իրենց հարուստ բնությունով, բնակլիմայական պայմաններով, թթվածնով հարուստ մաքուր օդ, հանքային բուժիչ ջրեր, անտառներ, դեղաբույսերով հարուստ լեռնաշխարհ: Ինչպես նաև Լոռու և Տավուշի մարզերի տարածքը չափազանց հարուստ է պատմամշակութային կառույցներով՝ բերդեր, ամրոցներ, վանական համալիրներ խաչքարեր, կամուրջներ, , հուշակոթողներ, հուշադրյույթներ:

***Աղյուսակ 1. Լոռու և Տավուշի մարզերի ընդհանուր բնութագիր,
բնակչություն, տարածք, գյուղեր, քաղաքներ
2019թ.***


Մարզ	Բնակչություն	Քաղաքային	Գյուղական	Տարածք	Քաղաքներ	Գյուղեր
Լոռու մարզ	215,5 հազ. մարդ	127,6 հազ. մարդ	87,9 հազ. մարդ	3799 քառ.կմ	8	122
Տավուշի մարզ	122,2 հազ. մարդ	51,7 հազ. մարդ	70,5 հազ. մարդ	2704 քառ. կմ	5	61

Լոռու և Տավուշի մարզերում 2015-2018 թթ. ընթացքում զբոսաշրջության ոլորտի հետ առավելագույնս առնչվող ծառայությունների ծավալների համեմատություն

**Աղյուսակ 2. Լոռու և Տավուշի մարզերի
2015–2018թթ. -ի
ծառայությունների ծավալները**

	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.
Լոռի	17 663,7	15 868,0	18 303,1	21 276,0
Տավուշ	10 597,1	10 767,0	14 111,0	16 346,1


Մլն./դրամ



Աղյուսակ 3. Լոռու և Տավուշի մարզերում 2015-2018թթ. -ի կացության և հանրային սննդի կազմակերպման ծավալների համեմատություն

	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.
Լոռի	685,5	984,0	1229,0	1163,8
Տավուշ	1363,9	1867,7	1973,6	2563,6

Մլն./դրամ




Տավուշի մարզում կացության և հանրային սննդի կազմակերպման ոլորտը բավականին զարգացած է, չնայած նրան ,որ Լոռու մարզում նույնպես նկատվում է առաջընթաց:

Աղյուսակ 4. Լոռու և Տավուշի մարզերում 2015-2018 թթ. -ի մշակույթի, զվարճությունների, հանգստի կազմակերպման ծավալների համեմատություն

	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.
Լոռի	19,7	76,5	55,2	51,1
Տավուշ	7,3	26,4	106,7	144,6

Մլն./դրամ




Ըստ Լոռու ՏԶՀ Կենտրոնի կատարած հետազոտությունների, Լոռու մարզում չկան հետաքրքիր ժամանցի վայրեր, հատկապես երեկոյան ժամերին: Վանաձոր քաղաքում գործող հյուրանոցների, հյուրատների ներկայացուցիչների հետ զրույցի ժամանակ, պարզեցինք որ այցելուները ձանձրանում են քաղաքում, երեկոյան ժամերին չգիտեն ուր այցելել քաղաքում, ինչով զբաղվել, այդ իսկ պատճառով երկար չեն մնում հյուրատանը, հյուրանոցում: Միջինը 3-5 օր:

Աղյուսակ 5. Լոռու և Տավուշի մարզերում 2015–2018թթ. -ի տեղեկատվության և կապի ծավալների համեմատություն

Մլն./դրամ


	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.
Լոռի	2356,5	2023,9	1726,6	1789,0
Տավուշ	843,9	676,5	550,7	466,6



Աղյուսակ 6. Լոռու և Տավուշի մարզերում 2015–2018թթ. -ի Տրանսպորտի ծառայությունների ծավալների համեմատություն

Մլն./դրամ

	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.
Լոռի	3608,5	1569,0	1833,2	1737,4
Տավուշ	1015,0	654,6	736,5	572,2




ՀՀ Լոռու մարզի մրցակցային առավելությունն է դեպի Վրաստան տանող երկու միջպետական Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման և Մ3 Վանաձոր-Ստեփանավան-Տաշիր-Վրաստանի սահման ավտոճանապարհները և մարզի տարածքով անցնող Հայաստանը Վրաստանին կապող երկաթգիծը: Վանաձոր քաղաքից Լոռու մարզի գյուղեր և քաղաքներ տանող տրանսպորտը աշխատում է բավականին լավ, ուղղակի ավտոբուսները շատ հին են և մաշված:

Աղյուսակ 7. Լոռու և Տավուշի մարզերում 2015–2018 թթ. -ի Մպասարկման այլ ծառայությունների ծավալների համեմատություն

Մլն./դրամ

	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.
Լոռի	190,6	203,5	218,0	224,2
Տավուշ	230,3	279,5	415,5	518,4



Աղյուսակ 8. Լոռու և Տավուշի մարզերում 2017 թ. թանգարանների այցելությունների թվաքանակը

Մլն./դրամ

	Այցելությունների թվաքանակը						Այդ թվում՝	
	Ընդամենը			Նրանցից՝ սովորողներ			վճարովի	անվճար
	Ընդամենը	Անհատներ	Էքսկուրսիաներ	Ընդամենը	Անհատներ	Էքսկուրսիաներ		
Լոռի	22 670	11 217	11 450	13 171	5 527	7 644	6 890	15 780
Տավուշ	6 789	1 489	5 300	3 691	841	2 850	2 180	4 609

Թանգարանների այցելությունների թվաքանակը ամենայն հավանականությամբ պայմանավորված է նրանով, որ Լոռու մարզում կա 8 թանգարան, Տավուշի մարզում 3: Սակայն հարկ է նշել, որ թանգարանների մասին տեղեկատվության պակասը շատ մեծ է:

**Աղյուսակ 9. Մարզային և համայնքային ենթակայությամբ գործող
մշակութային կազմակերպությունների բաշխվածությունն ըստ Լոռու և Տավուշի մարզերի
2018թ.**


Մլն./դրամ

Մարզը	Բնակչության թիվը (մշտ.)	Համայնքների թիվը	Թանգարաններ	Գրադարաններ	Թատրոններ	Համերգային կազմա- կերպություններ	Երաժշտ. դպրոցներ	Արվեստի դպրոցներ	Գեղարվեստի դպրոցներ	Ընդամենը
Լոռի	217.4	56	8	48	8	3	7	12	3	89
Տավուշ	123,5	24	3	61	3	-	11	5	1	84

Ձեզ ենք ներկայացնում սույն ուսումնասիրությունից մի հատված ,որը իրականացվել է Միավորված Ազգերի Կազմակերպության Զարգացման Ծրագրի (ՄԱԶԾ) կողմից՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համատեղ իրականացվող «Ինտեգրված գյուղական զբոսաշրջության զարգացում» (ԻԳԶԶ) ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում: Ուսումնասիրության նպատակն էր մշակել առաջարկություններ Հայաստանում ներգնա զբոսաշրջության զարգացման ուղղությամբ: Ուսումնասիրության շրջանակներում իրականացվել են անանուն հարցումներ և խորքային հարցազրույցներ, որոնց խնդիրն էր ստանալ տեղեկություններ Հայաստանի ներքին կարճաժամկետ զբոսաշրջության վերաբերյալ:


Հարցմանը մասնակցել է 18 տարեկանից բարձր **454 քաղաքացի** Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի ,Շիրակի մարզերից և Երևանից: Քանի որ համեմատական մարզ ընտրել ենք Տավուշը, ուսումնասիրության արդյունքները նույնպես կտեղադրվեն միայն Լոռու և Տավուշի մարզերինը, իսկ ամբողջականան ուսումնասիրության արդյունքները կարող էք ձեռք բերել Լոռու Տուրիզմի Զարգացման և Հետազոտության կենտրոնից:

ՀԱՐՑ- Վերջին 1 տարվա ընթացքում Հայաստանում արդյոք մեկնել էք հանգստի/արշավի/զբոսաշրջության 1 ցերեկով կամ առավելագույնը 1-2 զիշերակացով:



Հանգստի մեկնողների ամենաբարձր տոկոսը գրանցվել է Լոռիում՝ մոտ 100 տոկոս: Ամենացածր տոկոսը գրանցվել է Սյունիքի մարզում: Երևանում վերջին մեկ տարվա ընթացքում հանգստի մեկնել են հարցվածների մոտ 80 տոկոսը: Իսկ Տավուշում հանգստի մեկնել է հարցվածների 74,2 տոկոսը:


ՀԱՐՑ- Ո՞ր եք մեկնել վերջին 1 տարվա ընթացքում 1 ցերեկով:



Մեկ ցերեկով հանգստի ամենատարածված վայրը Սևանն է: Հարցման ընթացքում նշված 132 տեղանուններից Սևանը նշվել է 117 անգամ: Հարցվածների 41.1%-ը տարվա մեջ, զոնե մեկ անգամ, հանգստացել են Սևանի ափին: Առաջին եռյակի մյուս ուղղություններն են Դիլիջանը, ապա Գառնին ու Գեղարդը:

Ըստ բնակության վայրի՝ գերադասելի ուղղությունները տարբերվում են.


Գծապատկեր 5.



1-2 գիշերակացով հանգստացողների նախընտրությունները որոշակիորեն տարբերվում են ցերեկային հանգստի ուղղություններից: 1-2 գիշերակացով ամենապահանջարկված ուղղությունն է Դիլիջանը: Հարցման ժամանակ հիշատակված 64 տեղանուններից Դիլիջանը նշվել է 54 անգամ: Հանգստացողների 27.7%-ը առնվազն մեկ անգամ իրենց հանգիստն անցկացրել է Դիլիջանում: Դիլիջանին հաջորդել են Ծաղկաձորը և Արցախը:


ՀԱՐՑ-Ուր եք մեկնել վերջին մեկ տարվա ընթացքում առավելագույնը 1-2 գիշերակացով:

Գծապատկեր 6.



Ըստ տարբեր բնակավայրերի, դարձյալ առկա են տարբերություններ:

Գծապատկեր 7.




. Հաշվի առնելով հանգստի ժամանակի կարճ տևողությունը՝ ընդամենը կես օր, բնական է, որ զբոսաշրջիկները գերադասում են հանգստի մեկնել իրենց մշտական բնակավայրից ոչ շատ հեռու: Երևանը, որպես իրենց մշտական բնակության վայր նշած ռեսպոնդենտները, նախընտրում են հայաստանյան «ավանդական» հանգստավայրերը: Թերևս բացառություն են Տաթևը և Ստեփանավանի դենդրոպարկը: Այս երկու ուղղություններն ունեն իրենց բացատրությունը. զբոսաշրջիկները մեկ օրով մեկնում են ճոպանուղի նստելու կամ դենդրոպարկում «մաքուր օդ շնչելու»: Գյումրիի նկատմամբ հետաքրքրության աճը պայմանավորված է վերջին 2-3 տարիներին պետական քաղաքականությամբ՝ ուղղված Գյումրին, որպես քաղաքային զբոսաշրջային կենտրոն դարձնելուն:

Մարզերի ռեսպոնդենտները հիմնականում գերադասում են իրենց մեկօրյա հանգիստն անցկացնել կամ մարզի տարածքում, կամ մարզից ոչ շատ հեռու: Հարցմամբ բացահայտված միակ բացառությունը Շիրակից 9 ռեսպոնդենտի այցն է Տաթև, ինչը հնարավոր է, որ պայմանավորված է աշխատանքային կոլեկտիվի կազմակերպած այցով և չի կարող դիտվել որպես օրինաչափություն:

Գիշերակացով զբոսաշրջային ուղղությունների ուսումնասիրությունը դարձյալ ցույց է տալիս, որ դարձյալ գերիշխում են «ավանդական» հանգստավայրերը: Ընդ որում, հազվադեպ «ոչ ավանդական» ուղղություններ զբոսաշրջության հիմնականում մեկնում են տվյալ մարզերի բնակիչները, օրինակ՝ Սոսիների պուրակ կամ Ճամբարակ:


Ինչպես նաև կատարեցինք ուսումնասիրություններ Հայաստանում գործող տուրօպերատորների շրջանում, հասկանալու համար, թե Լոռու մարզը ինչ դիրք է զբաղեցնում իրենց տուրերում և որոնք են հիմնական ուղղությունները: Եվ այսպես, ահա հիմնական ուղղությունները, որոնք կազմակերպում են տուրօպերատորները դեպի Լոռու մարզ.

Գծապատկեր 8. Տուրքաբատրոնների հիմնական ուղղությունները Լոռու մարզում



Ինչպես նաև Լոռու ՏՁՀ կենտրոնը իրականացրել է հետազոտություն ՀՀ քաղաքացիների շրջանում, հասկանալու համար ամենաշատ այցելվող վայրերը Լոռու մարզում: Ահա հետազոտության արդյունքները՝

Գծապատկեր 9. Լոռու մարզ ՀՀ քաղաքացիների կողմից ամենաշատ այցելված վայրերը 2019թ.




Հետազոտությունների արդյունքից պարզ է դառնում, որ կրոնական և պատմամշակութային տուրքերում Լոռին ավելի շատ է ընդգրկված, ինչը հիմնականում պայմանավորված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակութային ժառանգության կազմի մեջ ընդգրկված Հաղպատի և Սանահինի վանական համալիրներով:

Դենդրոպարկում , տարվա մեջ միայն մի կարճ ժամանակաշրջան՝ մայիս-հունիս ամիսներին սոճիների փոշոտման ընթացքում սոճու անտառներում արտադրվում են ֆիտոնցիդ նյութեր, որոնք չափազանց կազդուրիչ են շնչառական ուղիների հիվանդություններով տառապող մարդկանց համար: Մանկահասակ երեխաների համար հատկապես անփոխարինելի են սոճիների արտազատած նյութերը, որոնք ունենալով արտահայտված հակաբորբոքային և հակավիրուսային ազդեցություն, շնչառական ուղիներով անցնում են թոքեր և մանրէազերծում դրանք:

Լոռիում ՀՀ տուրօպերատորների նախընտրելի զբոսաշրջության տեսակների ցանկը հարկավոր է ընդլայնել, քանի որ Լոռու մարզում կան նաև շատ այլ հեռանկարային համարվող զբոսաշրջության տեսակներ: Դրանք են.

Գծապատկեր 10. Լոռու մարզում զբոսաշրջության հեռանկարային տեսակները



Լոռու մարզը կգարմացնի ձեզ իր գեղատեսիլ լեռներով, հարուստ բուսականությամբ և փարթամ անտառներով, խորունկ կիրճերով, արագընթաց գետերով, հնագույն ճարտարապետական հուշարձաններով, ինչպես նաև տեղի բնակչության բարությամբ և հյուրասիրությամբ: Լոռին եզակի զբոսաշրջային արդյունք առաջարկելու զգալի ներուժ ունի շնորհիվ իր կլիմայական պայմանների, առանձնահատուկ խոհանոցի և բնական ռեսուրսների:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ




2019թ-ին Կառավարության սուբվենցիոն ծրագրով իրականացվող հիմնանորոգումները մարզկենտրոնին նոր շունչ կհաղորդի: Տարիներ շարունակ, Հայքի հրապարակը, չնայած իր ճարտարապետական տեսքին, գտնվում էր անբարեկարգ ու անմխիթար վիճակում: Այսօր Հայքի Հրապարակը ունի նմանը չունեցող ձայնային և լուսային էֆեկտներով շատրվաններ, հրապարակի

շենքերի արտաքին լուսավորություն, որը քաղաքին հաղորդում է հեքիաթային գեղեցկություն: Քաղաքում սուբվենցիոն ծրագրի շրջանակներում ակտիվ տեմպերով բարեկարգվում են պուրակները, այգիները, ... Ինչպես նաև 2019թ.-ին Վանաձորին հանձնվեց Երիտասարդական մայրաքաղաքի բանալին:


Վանաձոր քաղաքում իրականացրեցինք հետազոտություն հյուրատների, հյուրանոցների ներկայացուցիչների շրջանում, քաղաքային զբոսաշրջության զարգացմանը խոչընդոտող խնդիրները պարզելու նպատակով: Դրանք են՝

Գծապատկեր 11. Վանաձոր քաղաքում զբոսաշրջության զարգացմանը խոչընդոտող խնդիրները



Ձեզ ենք ներկայացնում <<Համայնքի 2018-2021 թթ. զարգացման ծրագրի>> SWOT վերլուծությունից մի հատված , Համայնքի Ուժեղ Կողմերը և Հնարավորությունները, որոնք կարող են մեզ օգնել Վանաձորում զբոսաշրջության զարգացման համար:

Գծապատկեր 12. Համայնքի ուժեղ կողմերը և հնարավորությունները





ԼՈՐԻ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
LORI VISITOR INFORMATION CENTER

2018թ-ից Վանաձորում, հենց քաղաքի սրտում, Հայքի Հրապարակում գործում է Լոռու այցելուների տեղեկատվական կենտրոնը՝ հիմնված ՄԱԿ Զարգացման Ծրագրի կողմից: Կենտրոնը իր այցելուներին օգնում է գտնել կացարաններ, գտնել համապատասխան տրանսպորտ, կազմակերպում է քաղաքային տուրեր, այցելություններ Վանաձորի վարպետներին, կազմակերպում տարբեր

ուղորտի վարպետաց դասեր զբոսաշրջիկների համար: Ի լրումն քաղաքային տուրերի, իրականացվում են նաև Սովետական Կիրովականի տեսարժան վայրերով և լքված գործարաններով տուր: Լոռու այցելուների տեղեկատվական կենտրոնը լինելով առաջինը Վանաձորում քաղաքային տուրի կազմակերպման հարցում, առաջինն է նաև <<Սովետական տուրի>> հարցում:

Այս տուրերը 2019 թ-ին շատ մեծ հետաքրքրություն առաջացրեցին ինչպես հայ այնպես էլ օրարերկրացի զբոսաշրջիկների կողմից:



ՀԵՆՐԻԿ ԻԳԻԹՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Վանաձորում գործում է <<Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնը>>, որտեղ երեխաները սովորում են կարպետագործություն, գորելեն, Ասեղնագործություն, նկարչություն, Տիկնիկագործություն, ... Գեղագիտական ազգային կենտրոնը հասցրել է լինել Լոռու մարզի հայ և

օտարերկրա այցելուների սիրելի վայրերից մեկը, որտեղ ներկայացված է հայկական արվեստի նունիսկ ամենափոքրիկ տարրը, հայկական շունչն ու ոգին:



ԿԵՐՊԱՐԱՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ

1974թ.-ի հունիսի 8-ին Կիրովականում բացվեց Հայաստանի ազգային պետական պատկերասրահի Կիրովականի մասնաճյուղը: Վանաձորի կերպարվեստի թանգարանը Լոռու մարզի կարևորագույն մշակութային օջախներից է: Ցուցադրության ընդհանուր տարածքը 1500քմ է, այն ներառում է 2000 ցուցանմուշ: Թանգարանը ներկայացնում է և դասական, և ժամանակակից հայ կերպարվեստը:

Վանաձորն ունի տաղանդավոր լուսանկարիչների, ովքեր մեծ սիրով հյուրընկալում են զբոսաշրջիկներին իրենք

արվեստանոցում, ծանոթացնում իրենց արվեստի/արհեստի հետ, նաև կազմակերպում են վարպետաց դասեր:

ՌՈՔ ԽՄԲԵՐ

Չմոռանանք նաև երիտասարդների կողմից շատ սիրելի ռոք խմբերի մասին, որոնք կազմավորվել են հենց Վանաձորում, ճանաչում են ձեռք բերել ողջ Հայաստանում:
Վանաձորում հաճախ կազմակերպվում են ռոք համերգներ և Հայաստանի տարբեր մարզերից երիտասարդները այցելում են Վանաձոր: Որդան Կարմիր, Լավ Էլի, Ան Գորդոնախ, Lousnelius, Clocker:




ԱՐԿԱԾԱՅԻՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Արկածային տուրիզմը ենթադրում է որևէ ուսումնասիրություն և իրական (կամ հավանական) ռիսկեր պարունակող ճամփորդություն:

Արկածային տուրիստները կարող են ձգտել հաղթահարելու լարված և դժվար իրավիճակներ, որոնք առաջանում են նրանց՝ հարմարավետության գոտին լքելու արդյունքում: Սա կարող է տեղի ունենալ մշակութային շոկ (ցնցություն) ապրելու կամ կոնկրետ գործողությունների հետևանքով, որոնք պահանջում են զգալի ջանքեր և ներկայացնում են ֆիզիկական վտանգ կամ ռիսկի որոշակի աստիճան ունեն:

Առանձնացրել ենք արկածային տուրիզմի տեսակներ, որոնք ըստ Լոռու ՏՁՀ Կենտրոնի հետազոտությունների արդյունքների, Լոռու մարզում զարգացած են կամ ունեն բոլոր անհրաժեշտ պայմանները զարգանալու:

***Գծապատկեր 13.** Արկածային տուրիզմի տեսակների հեռանկարային զարգացումը Լոռու մարզում*





ԼԵՌՆԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ - Լոռին լեռնագնացության համար իդեալական վայր է: Բազմաթիվ տուրօպերատորներ կազմակերպում են խմբային արշավներ հենց այս լեռները, որոնք գտնվում են Լոռու մարզում՝

- Լավվար լեռը՝ Վիրահայոց լեռնաշղթայի ամենաբարձր գագաթը (2,552 մ.);
- Ձիթանից լեռը, որը երբեմն Մայմեխ են անվանում

(2,534 մ.)

- Աչքասար լեռը (3,196 մ.):
- Բազումթառ լեռ / Լոռու մարզ: Բարձրությունը 2796 մ է: Լանջերի մի մասը անտառապատ է: Լեռան ստորոտում նշմարվում են հին բնակավայրի հետքեր: Այստեղ կա մի անցք, որը խորանում է լեռան մեջ, այն ժամանակին կոչել են Որմակա դուռ: Ոմանք ենթադրում են, որ հին անունը Որմակ է եղել: / ArmLand Ջրոսաշրջային ակումբ-ի ՖԲ էջից/
- Թեժ Լեռը Փամբակի լեռնաշղթայի ամենաբարձր կետը: Բարձրություն 3101 մ: Ներժայթուք է՝ կազմված Էոցենի հրաբխային ապարներից (նեֆելինային սիենիտներ, գրանիտներ): Լանջերը զառիթափ են, լանդշաֆտը՝ լեռնամարգագետնային: Մարգահովիտ գյուղից 7 կմ հյուսիս-արևմուտք
- Վուլկան լեռը Փամբակի լեռնաշղթայի անանուն գագաթներից է՝ 2800 մ բարձրությամբ: Քարտեզների վրա այս լեռան անունը նշված չէ: Լեռը պարզ երևում է Ֆիոլետովո գյուղից: Տեղի մոլոկանները լեռանը Վուլկան են անվանում: / Armenian Geographic Հայկական աշխարհագրական նախագծի ՖԲ էջից/



ՀԵԾԱՆՎԱՅԻՆ ՏՈՒՐԻԶՄԸ նույալեւ կարող է լինել շատ ակտիվ, <<Բու>> լեռնահեծանվային պարկը, ակտիվ գործունեություն է ծավալում Լոռու մարզում: Հեծանվային պարկը Հայաստանում նորույթ է, քանի որ Հայաստանում չունենք լեռնահեծանվային գծանշված երթուղիներ: Պարկը գտնվում է Վանաձոր քաղաքի Փամբակ լեռնաանտառային գոտում: Սկզբի համար փորձնական կառուցվել է երկու կիլոմետրանոց երթուղու մի մասը, որը միջին բարդության է և նախատեսված է դաունհիլ սպորտաձևի համար: Այն, ի տարբերություն մյուս տեսակների ավելի տեխնիկական է և

էքստրեմալ:

Երթուղին կառուցում են հենց գաղափարի հեղինակները, ինչի համար ուսումնասիրել են դրսի փորձը և սովորել նրանցից, քանի որ Հայաստանում չկան նման մասնագետներ կամ փորձագետներ: Կառուցման համար օգտագործում են գյուղատնտեսական ձեռքի գործիքներ և ունեն ծրագրին միացած արկածասեր կամավորներ, ինչպես Երևանից, այնպես էլ Վանաձորից, ովքեր հետաքրքրված են պարկի զարգացման աշխատանքներով և շատ ակտիվ են երթուղու կառուցման աշխատանքների ժամանակ: Լեռնահեծանվային պարկ ստեղծելու

նախաձեռնությունը իրագործվեց 2016թ. օգոստոսի վերջին “Էկոլաբ” հիմնադրամում:

Ինչպես նաև ՀԿ կենտրոնը տրամադրում է հեծանիվների վարձույթ, որոնցով կարող եք շրջել ամբողջ Լոռու մարզում:



ԺԱՅՈՒՄՍԱԳԼՑՈՒՄ/ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՊԱՏ-Ստեփանավան քաղաքում գործում է <<ԼՈՌԷ>> Ակտիվ Հանգիստի կենտրոնը , որը կազմակերպում է քայլարշավներ, էքսկուրսիաներ,կինոդիտումներ,էքստրիմ պարկ,ժայռամագլցման արհեստական պատ, գիպլայն,խարույկ, գիշերակաց:



ՔԱՅԼԱՐՇԱՎԱՅԻՆ ԱՐԱՀԵՏՆԵՐ-Լոռիում կառուցվել է 47.2 կմ երկարությամբ քայլուղին, որը ձգվում է Նեղոցից Ծաղկաշատ և Հաղպատ, Ակներից Սանահին, Օձուն, Հոռոմայր և Քոբայր: Վերջերս քայլուղին գնահատեց նաև քայլուղիների միջազգային փորձագետ՝ Հանս Քեյֆերը, ով ժամանել էր Լոռի ծանոթանալու կատարված աշխատանքներին:

Հիշեցնենք, որ նախագիծն իրականացվում է Ռուսաստանի Դաշնության կողմից ֆինանսավորվող և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից իրականացվող Ինտեգրված Գյուղական

Զբոսաշրջության Զարգացում ծրագրի և Հայ լեռնագնացների միության հետ համատեղ:



ՌԱՖՏԻՆԳ-Լոռու մարզի Դեբեդ և Ձորագետ գետերը դարձել են ակտիվ հանգիստ նախընտրող մարդկանց սիրելի վայրը:

Գեղեցիկ կիրճերով հոսող այս արագընթաց գետերը կատարյալ միջավայր են ռաֆտինգի համար: Ռաֆտինգն աշխարհում արկածային զբոսաշրջության ամենատարածված ձևերից մեկն է: Վրաստանում արդեն 15 տարի է զբաղվում են

ռաֆտինգով,իսկ Հայաստանում 2017 թ-ից: Լոռու մարզում ռաֆտինգով զբաղվում են 2 կազմակերպություններ՝ Rafting in

Armenia և Rafting.am in Armenia: Rafting in Armenia-յի հետ

ռաֆտելու ընթացքում մասնակիցները հնարավորություն ունեն ցատկելու Թումանյանի պատմական կամրջից, զբաղվել սլայդինգով,կազմակերպել թիմային խաղեր:




ԶԻՊԼԱՅՆ /մոտ ապագայում/- ՀԿ Կենտրոնի նախաձեռնությամբ նախատեսվում է <<ՀՀ Լոռու մարզի Դսեղի Ծովեր լճակի տարածքում շուրջ 300 մ երկարությամբ Զիպլայնի կառուցում՝ ծառերից ամրացման եղանակով>>, ամենայն հավանականությամբ 2020-2021 թթ-ին կարող ենք վայելել հրաշալի բնությունը և Ծովերը վերևից:

ԱՌՈՂՋԱՐԱՆԱՅԻՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՆԵՐՈՒԺԸ

Լոռու մարզը նպաստավոր տարածաշրջան է առողջարանային զբոսաշրջության կազմակերպման համար:

Լոռու մարզն ունի բնական և մարդածին ռեկրեացիոն բազմաթիվ ռեսուրսներ:

Գծապատկեր 14. Առողջարանային ներուժ



Ռեկրեացիոն ռեսուրսների պահպանումը, վերականգնումը հրատապ խնդիրներ են հանդիսանում համաշխարհային տնտեսության զարգացման արդի պայմաններում, երբ շրջակա միջավայրը ավելի չափերով է աղտոտվում:



ՎԱՆԱՁՈՐ-ԱՐՄԵՆԻԱ ԱՌՈՂՋԱՐԱՆ

Վանաձորը հայտնի է իր վերականգնողական առողջավայրերով, որտեղ բուժում են սիրտ-անոթային համակարգի, ստամոքս-աղիքային տրակտի, հենաշարժական ապարատի քրոնիկական հիվանդությունները:



ARMBEE HONEY FARM.

ԱԼԱՎԵՐԴՈՒ ՄԵՂՎԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Վիզեն Մնացականյանի մեղվաբուծարանն իր տեսակով առանձնահատուկ է Ալավերդիում ու տարածաշրջանում: Մեղվաբուծարանի տարածքում մեղուների տնակներից բացի մեծ տնակներ էլ կան: Դրանք ապիտոնակներ են, որոնցում նույնպես մեղվաբուծանիքներ են ապրում, բայց արդեն հատուկ մահճակալների մեջ տեղադրված արկղերում: Իսկ մահճակալներն այն մարդկանց համար են նախատեսված,

ովքեր այստեղ են գալիս՝ մեղվաբուծության կամ որ նույնն է՝ ապիթերապիայի նպատակով:



POTTERY HOUSE ARMENIA կավաբուժության կենտրոնը գտնվում է Սանահին վանական համալիրի մոտ: Կենտրոնում բացի Կավաթերապիայից, այն արտթերապիայի մեթոդ է, որն աշխատում է մարդու հուզական, զգացական փորձի հետ, որտեղ կավի հետ փոխազդեցությունն օգտագործվում է թերապևտիկ նպատակով, կատարվում են նաև տարբեր տեսակի բուժիչ մերսումներ:

Տաք քարերով մերսում-Իրականացվում է հրաբխային ծագում ունեցող բազալտե քարերով, որոնք երկար ժամանակ պահպանում են տաքությունն ու փոխանցում են այն մարմնին: Քարերի հաճելի ջերմությունն ու վարպետի հմուտ ձեռքերը կօգնեն որ թոթափեք լարվածությունը, ձերբազատվեք սթրեսից և ընկղմվեք հանգստի ու հաճույքի աշխարհ:

Խոտաբույսերի տաք պարկերով մերսումը - կիրառվել է բժշկության մեջ դեռ վաղ ժամանակներից: Դա հանգստացնող, առողջարար մերսում է, որը նպաստում է դեղաբույսերի օգտակար բաղադրիչների ներթափանցմանն օրգանիզմ և դրանց բուժիչ ազդեցության բարձրացմանը:

Լոռու ռեկրեացիոն շրջանի բնակլիմայական պայմանները նպաստավոր են մարդկանց առողջության վերականգնման համար, հատկապես խոնավ կլիման, որը մարդկանց գերծ է պահում վիրուսային վարակներից, օր.՝ գրիպից, անգինայից: Այդպիսի խոնավ կլիման կարող է ունենալ նաև բացասական ազդեցություն, օրինակ՝ մարդկանց մոտ կարող են առաջանալ հոդային հիվանդություններ, նպաստավոր պայմաններ ստեղծվեն տեղային խալիպի զարգացման համար: Այդ իսկ պատճառով Լոռու մարզը նպաստավոր է ամառային զբոսաշրջության և ձմեռային հանգստի կազմակերպման համար: Ամառային հանգիստի կազմակերպման համար առավել հարմարավետ են Վանաձոր, Փամբակ և Ձորագետ գետերի հովիտները: Լոռին առանձնանում է նաև իր բուժիչ հանքային ջրերով, որոնք մարդու համար ունեն կարևոր ֆիզիոլոգիական ազդեցություն: Դրանցից հայտնի են Վանաձորի և Ֆիոլետովոյի հանքային աղբյուրները: Վանաձորի հանքային աղբյուրները գտնվում են Վանաձոր և Փամբակ գետերի ափերին: Հանքային աղբյուրներն ունեն 2.5-10 լ/վ ելք, ջրերի բաղադրությունը քլոր-սուլֆատ-հիդրոկարբոնատային կալցիում-մագնեզիում-նատրիումային է, հանքայնացումը՝ 2.8 գ/լ-ից մինչև 7.2 գ/լ, լուծված ածխաթթվի պարունակությունը՝ 1.4-2.9 գ/լ է: Այն բարենպաստ ազդեցություն ունի նյութափոխանակության կարգավորման վրա:


ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ/ԱԳՐՈՏՈՒՐԻԶՄ

Ագրոտտորիզմը զբոսաշրջիկներին հնարավորություն է տալիս վայելելու էկոլոգիապես մաքուր սննդամթերք, ծանոթանալու գյուղական կյանքին, գյուղմթերքների մշակման ու արտադրության գործընթացին, զբոսաշրջիկները կարող են մասնակցել կաթնամթերքների արտադրությանը գյուղական պայմաններում, վայելելու իրենց հանգիստն մաքուր օդի պայմաններում և այս ամենը համեմատաբար մատչելի գներով:

Արդեն մի քանի տարի է, ինչ զբոսաշրջիկները Հայաստան են այցելում՝ ուսումնասիրելու մեր գյուղական համայնքները, վայելելու բնությունը և ծանոթանալու տեղաբնակների ապրելակերպին ու ավանդույթներին: Զբոսաշրջության այս ձևը՝ ագրոտտորիզմը, բավական գրավիչ, մատչելի ու հեռանկարային է:

Հետևյալ արարողությունները Լոռու մարզում ագրոտտորիզմի զարգացման հիմնական տարրերն են: Դրանք զուգորդելով գյուղական զբոսաշրջության հետ՝ ստացվում են առանձնահատուկ տուրապրանքներ, որոնք նոր շունչ կարող են հաղորդել հայաստանյան զբոսաշրջային շուկային:

Գծապատկեր 15. Լոռու մարզում ագրոտտորիզմի զարգացմանը միտված արարողություններ




Ըստ Լոռու ՏԶՀ Կենտրոնի կատարած հետազոտությունների, Լոռու մարզում գյուղական տուրիզմի զարգացման համար իդեալական վայր է Մարց և Քարինջ գյուղերը:



Քարինջ գյուղի բնակչությունը՝ 580 մարդ, մշտական բնակչությունը՝ 634, առկա տնային տնտեսությունների քանակը՝ 144: Գյուղացիները պատմում են ,որ մի հետաքրքիր կիսակառույց մեծ շինություն կա գյուղում, որը 20-30 տարի առաջ կառուցվել է որպես մանկապարտեզ, բայց այդպես էլ չի շահագործվել: Շենքը պատկանում է համայնքին: Գյուղացիների կարծիքով, կառույցը ներդրում է պահանջում կաթի կամ հատապտուղների վերամշակման ոլորտում: Հեռանկարային կլինի այն օգտագործել նաև գյուղական զբոսաշրջության մեջ: Այս ոլորտում գյուղն ունի մեծ

մրցակցային առավելություն՝ չքնաղ բնություն, կլիմա: Շատ զբոսաշրջիկներ են արդեն հետաքրքրված գյուղով, բայց նրանց ընդունելու հնարավորություն չկա: Գյուղում կա վաճառքի ենթակա մոտ 40-50 սեփական առանձնատուն, որոնց արժեքը տատանվում է 3-10 հազար ԱՄՆ դոլարի սահմաններում: Հյուրատներ կառուցելու նպատակով այդ տներում ներդրում կատարելու, ճանապարհը բարեկարգելու և նվազագույն կոմունալ ենթակառուցվածքներն ապահովելու դեպքում զբոսաշրջության զգալի աճ կգրանցվի: Գյուղացիների համար կստեղծվեն նոր աշխատատեղեր, կքչանա արտագաղթը:



Մարց գյուղի բնակչությունը՝ 554 մարդ, մշտական բնակչությունը՝ 495, առկա տնային տնտեսությունների քանակը՝ 165:

Մարց գյուղը Լոռու մարզի հնագույն գյուղերից է: 1967թ. հնագետների խումբը՝ Ա.Քալանթարյանի գլխավորությամբ, Մարցի շրջակայքում հետազոտություններ կատարելիս, պարզել է, որ գյուղի շրջակայքում դեռևս 3000 տարի առաջ եղել են մարդկանց բնակավայրեր: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, կերային կուլտուրաների մշակությամբ և պտղաբուծությամբ:

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԽՈՀԱՆՈՑ ԳԱՍՏՐՈՆՈՄԻԿ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Գաստրոգրոսաշրջությունը կարելի է բնորոշել որպես ճանապարհորդություն, որի նպատակն է ծանոթանալ այլ երկրի ազգային խոհանոցի, սննդի պատրաստման առանձնահատկությունների հետ, ձեռք բերել անկրկնելի ու հիշարժան գաստրոնոմիական փորձառություն:

Գաստրոգրոսաշրջությունն ունի զարգացման լուրջ նախադրյալներ ՀՀ-ում: Հայաստանի յուրաքանչյուր շրջան ունի իր ավանդական ուտելիքները: Հայաստանի ռեստորաններում առկա են հիմնականում առավել հայտնիները: Այնինչ հին ու մոռացված, պակաս հայտնի ուտելիքները վերաթարմացնելը և դրանք ռեստորանային մենյուներում ընդգրկելը խիստ կարևոր է ինչպես ազգային խոհանոցի ավանդույթների պահպանման, այնպես էլ գրոսաշրջիկներին հետաքրքիր ու համեղ կերակուրների լայն ցանկ առաջարկելու տեսանկյունից: Բացի այդ, դրանք կարելի է օգտագործել յուրաքանչյուր տարածաշրջանի համար գաստրոնոմիական բրենդ ստեղծելու նպատակով:

Լոռին հայտի է իր պանիրների տեսակներով և նաև ուտելի խոտաբույսերով: Հետևաբար կան բազմատեսակ աղցաններ Լոռվա բույսերից, որը տապակում են ձվով, կամ պարզապես տապակում են և մատուցում մածուկով: Ինչպես նաև բազմատեսակ են լոռեցիների մարինադի տեսակները՝ շուշան, դանձիլ, սինդրիկ և այլն: Հայտնի է նաև Լոռվա Փթռուկ ուտեստը, որը սովորաբար հենց խոտաբույսերով պատրաստված ապուր է, կաթով և այլուրով:



ՆՈՒՐԻԿ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ Լոռու մարզի, Ախթալա քաղաքում գործող Նուրիկ կենտրոն / Nurik Community and Tourism Development Center-ում մատուցվում են հայական և միջնադարյան խոհանոցի համեղ ուտեստներ: Կենտրոնն իրականացնում է նաև վարպետաց դասեր, հյուրերի դիմավորում հայակական երգ ու պարով, ծիսական միջոցառումներ:

Ձեզ ենք ներկայացնում Լոռվա մարզին բնորոշ մի քանի ուտեստներ՝



ԾԱՆԴԻԼ

Բաղադրությունը՝

1կգ. լոբի, 1կգ. ցորեն, 800գ. եգիպտացորեն, 6լ. ջուր, 200գ. յուղ, 100գ. սոխ, 50գ. ուրց, Աղ

Պատրաստման եղանակը: Հավասար չափով չոր լոբի, ցորենի խոշոր աղացած ձավար և համեմատաբար քիչ քանակությամբ եգիպտացորեն մաքրել, լցնել սառը ջրով կաթսայի մեջ, եփել մարմանդ կրակի վրա: Եփելուց հետո ավելացնել աղ, սոխառած և անպայման ուրց:

Սոխառածի պատրաստման համար թավան դնել կրակին, մեջ

լցնել անհրաժեշտ քանակությամբ յուղ, սոխը մանր կտրատել, ավելացնել յուղին, անընդհատ խառնել մինչև սոխը փափկի և ստանա վարդագույն երանգ, հետո վերցնել կրակից, վրան ավելացնել ուրց:



ԿՈՐԿՈՏ

Կորկոտը տարբեր տարածաշրջաններում պատրաստվում է տարբեր կերպ....

Վերցնել 1 կգ ձավար, 1 կգ խոզի ճարպ, աղ: Կաթսայի մեջ հերթականությամբ շարել ձավարն ու ճարպը և ավելացնել այնքան ջուր, որ զանգվածը ծածկվի: Եփել մինչև ճարպի ու ձավարի հալվելը: Աղն ըստ ճաշակի: Ոչխարի յուղոտ միսը կտրտում են ու շարում խոր

շուգունե կճուճի մեջ, ըստ համի աղ անում, համեմունք սև

կամ կարմիր պղպեղով, վրան մեկ շերտ լցնում են ցորենի ծեծած մանր ձավար: Այդ շերտի վրա կրկին միս են շարում և այդպես նույն գործողությունը կատարում են այնքան, մինչև որ կաթսան լցվի: Մեկ բաժակ ձավարին ավելացնում են երկու բաժակ ջուր, վերջում վերևից լցնում են սոխեռածը, որպեսզի յուղը ծծվի մինչև ներքևի շերտը: Կաթսայի բերանն ամուր փակում են և կախում, մարած, բայց տաք թոնրի մեջ: Առավոտյան տաք-տաք հրամցնում են հյուրերին, հետը օգտագործում են կաղամբի, բոխու և սպիտակ բազուկի կոթերի թթու:



ՃԻԼ ՈՒ ԵՂ

Բաղադրիչներ՝

2-3 ձու, կամ ըստ ցանկության, 100-150գր. անալի ճիլ պանիր, 1-2 թ.գ. կարագ: Աղ ըստ ճաշակի, եթե պանիրն աղի է, աղը քիչ անել: Թարմ կամ չորացրած կանաչեղեն, սև, կարմիր պղպեղ, և թարմ թարխուն Պատրաստման եղանակ

Հալեցնել կարագը, ավելացնել ճիլ պանիրը, մի քանի

րոպե եփել թույլ կրակի վրա: Ավելացնել հարած ձու, աղ: Եփել մինչ պատրաստ լինելը: Մատուցել համեմունքներով և թարմ կանաչիով:



ՀՈՆՈՎ ԱՊՈՒՐ

Բաղադրությունը՝ 1 բաժակ թարմ կամ չորացրած հոն, 4-5 բաժակ ջուր, 2 ճգ ալյուր, 1 պտղունց աղ, շաքարավազ ըստ ճաշակի:

Պատրաստման եղանակ՝

Հոնը քիչ ջրով եռացնում են և թողնում մի քիչ հովանա: Այնուհետև փլավքամի մեջ տրորում են մինչև կորիզների առանձնանալը: Մտացվում է համասեռ

թանձր զանգված: Մասսայի մի մասի մեջ անընդհատ հարելով ավելացնում են ալյուր, և խառնում մնացած զանգվածին: Ավելացնում են շաքարավազ և դնում կրակին: Մատուցվում է սառը վիճակում:



ԿՈՆՉՈՒԼ

Պատրաստելու համար անհրժեշտ է՝

1 գլուխ սոխ, միջին չափի, 70 գ յուղ կամ կարագ, 2-3 ձու, 3.5 բեռացրած ջուր: Աղ, սև ու կարմիր տաքդեղ ըստ ցանկության: Չոր կամ թարմ ուրց, կարելի է նաև համեմ կամ մաղադանոս ավելացնել: Հին հաց: Մատուցել տաք վիճակում: Միտոր մածունով շատ ավելի համեղ է:



ՓԻՓԵՐԹՈՎ ԱՊՈՒՐ

Բաղադրությունը՝

Փիփերթ – 4 կապ, կարտոֆիլ – 4 հատ, գլուխ սոխ – 4 հատ, կարմիր և սև փոշի պղպեղ, աղ

Պատրաստման եղանակը

Փիփերթը լվանալ, գլխիկների մասն առանձնացնել, ու դա կտրատած կարտոֆիլի եւ սոխի հետ շերտ-շերտ լցնել կաթսան: Ավելացնել ջուրն այնքան, մինչեւ երեսը ծածկվի, համեմել աղով ու պղպեղներով եւ եփել մինչեւ կարտոֆիլի փափկելը: Անու՝ 2 արեք՝ նաեւ մաքրելով Ձեր օրգանիզմը:



ԱՎԵԼՈՒԿԻ ԱՂՑԱՆ

Բաղադրությունը՝

100 գրամ չորացրած ավելուկ, 50 գրամ գլուխ սոխ, 20 գրամ ձեթ, աղ, սև պղպեղ

Պատրաստման եղանակը՝

Չորացրած ավելուկը եփել, քամել, շատ մանր կտրտել: Առանձին ամանում մանր կտրտած սոխով սոխառած անել, դրան ավելացնել ավելուկը, ապա աղ և սև պղպեղ ցանել, խառնել և բոլորը միասին տապակել մի քանի րոպե, այնուհետև լցնել աղցանամանը, թողնել, որ սառի և մատուցել:



ԵՂԻՆՋԻ ԱՊՈՒՐ

Պարունակություն

150 գ. եղինջի համար վերցնել 25 գ. գլուխ սոխ, 15 գ. հալած յուղ, 80 գ. կարտոֆիլ, 20 գ. բրինձ, աղ, պղպեղ, մաղադանոս՝ ըստ ճաշակի:

Պատրաստման եղանակը

Կաթսայի մեջ լցնել եռման ջուր, աղ, սոխեռած, մեծ կտորներով կտրատած կարտոֆիլ, լվացած բրինձ և եփել: Մատուցելուց 15 րոպե առաջ լցնել

մատղաշ, լվացած եղինջը և եփել: Խորհուրդ է տրվում ապուրը պատրաստել մսի արգանակով: Ապուրը մատուցել վրան մաղադանոս ցանած:



ԼՈՒՎԱ ԲՈՐԱՆԻ

Պատրաստման եղանակը՝

Գառան փափկամիսը համեմել աղով, պղպեղով, մարինացնել գինու մեջ մի քանի ժամ, ցանկալի է՝ ողջ գիշեր: Ապա հանել, կտրատել, տապակել բուսայուղի մեջ: Սոխը կտրատել, լցնել մսին, տապակել: Սմբուկն օղակ-օղակ կտրել, հետո օղակները չորս մաս անել, տապակել մսի և սոխի հետ: Նեխուրի տերևներն

առանձնացնել, ցողունները կտրատել երկար ձողիկների, լցնել թավայի մեջ: Ավելացնել սոուսը, խառնել: Սոուսից հետո թավայի մեջ լցնել գինին, կրակը մարմանդ դարձնել և եփել 7-8 րոպե: Ապա բորանին տեղափոխել ափսեի մեջ, զարդարել չոր լավաշով և նեխուրի կտրատած տերևներով:

Սոուս. սոուսը պատրաստելու համար ընկույզը, սխտորը ծեծել հավանգի մեջ, ավելացնել շատ մանր կտրատած սամիթ ու համեմ, բուսայուղ:



ԼԱՎԱՇՈՎ ՄՈԹԱԼ

Մոթայի պատրաստման ձև՝ մանրացրած պանիրը, մանրացրած թելպանիրը (ջիլ), քամած կաթնաշոռը, քամած մածունը խառնում են և համեմում աղով, ըստ ճաշակի: Ստացված զանգվածը լցնում են կավե սափորի մեջ, գլխիվայր շրջում և պահում սառը վայրում առնվազը 10 օր: Լավաշը բացում են, մոթալը լցնում են վրան, փաթաթում և համտեսում:


ԷԿՈԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ

Վերջին տարիներին Լոռու մարզում նկատվում է Էկոտուրիզմի և բնության հետ կապված զբոսաշրջության պահանջարկի կտրուկ աճ: Էկոլոգիական զբոսաշրջությունը (Էկոտուրիզմ, Էկոզբոսաշրջություն), բնության, նրա բաղադրիչների և պատմամշակութային հուշարձանների ճանաչողության նպատակով կազմակերպվող զբոսաշրջություն: Էկոզբոսաշրջության խնդիրներն են բնական և մշակութային ժառանգության պահպանության օժանդակումը, ազգաբնակչության Էկոլոգիական կրթության և իրազեկության բարձրացումը: Էկոզբոսաշրջությունը զբոսաշրջության առավել արագ զարգացող ճյուղերից է, չի նախատեսում հարմարավետ հյուրանոցներ և բարձրակարգ սպասարկման ծառայություններ իրականացվում է ավտոմեքենայով, հետիոտն, ձիով, վրանային և այլ միջոցներով: Մասնագետները համոզված են, որ Հայաստանն Էկոտուրիզմը զարգացնելու մեծ պոտենցիալ ունի:

Մեր երկրում կա 4 ազգային պարկ, 3 արգելոց, 27 արգելավայր և որպես զբոսաշրջիկին հասանելի Էկոտուրիզմի ռեսուրս՝ ավելի քան 40 գետ, 7 լիճ, մոտ 300 տեսակի թռչուն (որոնցից 260-ը ձվադրում են Լոռու մարզի տարածքում), 3500 տեսակի բույս, 220 տեսակի թիթեռ, կենդանիներ, որոնք ընդգրկված են Կարմիր գրքում, 100-ից ավելի քարանձավներ:

Լոռու մարզում Էկոզբոսաշրջության զարգացման համար ստեղծվել են՝


Գծապատկեր 16. Լոռու մարզում Էկոզբոսաշրջության համար ստեղծվել են հետևյալ պայմանները



Վերոնշյալ ուսումնասիրությունից ձեռք ենք ներկայացնում ևս մեկ հարցի պատասխանի արդյունք, որը ապացույցն է էկոտուրիզմի զարգացման, ոչ միայն Լոռու մարզում, այլև ամբողջ Հայաստանում:

ՀԱՐՑ- Հայաստանում 1-2 գիշերակացով ավելի հաճախ ի՞նչ նպատակով եք մեկնել

Գծապատկեր 17.



Նախասիրությունների շարքը գլխավորում են էկոտուրիզմը, քաղաքային տուրիզմը և մշակութային տուրիզմը:

Ինչպես նաև ծանոթացեք Լոռու մարզում գործող վրանային, ճամբարային հանգստի ակտիվ զբոսաշրջային կառույցներից մի քանիսի հետ:



«ՏՈՒԿ» ճամբարային բազան նախատեսված է ակտիվ հանգիստ նախընտրողների համար:

«ՏՈՒԿ»-ը իրենից ներկայացնում է ՀԿ կենտրոնի կողմից ստեղծված ճամբարային բազա, այն մատուցում է տուրիզմի հետ կապված բազմաբնույթ ծառայություններ:

Տուրիստական բազան գտնվում է Լոռու մարզի Դսեղ գյուղի կենտրոնական մասում: Իզուր չէ ընտրվել Դսեղ գյուղը, քանի որ այն յուրօրինակ գյուղ է և տարեց տարի ավելանում է այս գյուղ այցելողների և

զբոսաշրջիկների քանակը:



ԿԱՆՉԱՔԱՐ ՔԵՄՓՁՈՆԸ տուրիստական համալիրը գտնվում է Ալավերդի համայնքի Հաղպատ գյուղում: Այն նախատեսված է քեմփինգի, ակտիվ հանգստի և բնության սիրահարների համար: Տարածքը ապահովված է մշտական ջրով և սննդի պատրաստման համար անհրաժեշտ բոլոր պարագաներով: Տուրիստական համալիրը ամբողջությամբ շրջապատված է ցանկապատով, առկա է գիշերային լուսավորություն: Զբոսաշրջիկները հնարավորություն

ունեն օգտվել սանհանգույցից և տաք ցնցուղից: Տարածքի մոտակայքում են գտնվում Հաղպատի և Սանահինի վանական համալիրները, Կայանբերդը, Դեբեդ և Շերեք գետերը:


ՄԱՐԶԻ ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Հոգևոր-մշակութային կյանքը մարզում իր ուրույն տեղն ունի: Այն յուրաքանչյուր լոռեցու առօրյայի անբաժանելի մասն է կազմում: Ընդունված է ասել. Հայաստանը թանգարան է բաց երկնքի տակ, իսկ Լոռին այդ թանգարանի ամենաուշագրավ և հարուստ սրահներից մեկն է: Լոռու տարածքում մարդու մշակութային գործունեության հետքերը գալիս են վաղնջական ժամանակներից: Այդ մասին են վկայում դեռևս 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին Ախթալայի և Շամլուղի մերձակայքում՝ Ժակ Մորգանի, Սանահինում և Դսեղում՝ Ալ. Երիցյանի, Որնակում (այժմ՝ Ակներ)՝ Ն.Մառի, Հաղպատում, Պրիվոլնոյեում, Յադղանում՝ Ե. Թադայաշվիլու, Օձունում՝ Ս. Տեր-Ավետիսյանի և այլոց պեղումներով ի հայտ եկած մ.թ.ա երրորդից-առաջին հազարամյակներին վերաբերող մշակույթի արժեքավոր հուշարձանները, նաև հետագայում Դեբեդի ավազանի, Կիրովականի, Լոռի Բերդի, Քոսի ճոթերի, Ղարաքոթուկի, Լորուտի և այլ հնավայրերի պեղումների արդյունքները: Յուրաքանչյուր լոռեցի հպարտանում է իր մարզի գեղատեսիլ բնությամբ և հարուստ պատմամշակութային ժառանգությամբ: Լոռին համարվում է հայաստանյան զբոսաշրջության ամենագրավիչ անկյուններից մեկը: Լոռու հոգևոր-մշակութային բացառիկ արժեքներն ու լոռեցու հյուրընկալությունը, պարզությունն ու մաքրությունը յուրաքանչյուր տարի դեպի մարզ է կանչում հազարավոր զբոսաշրջիկների: Այստեղ են գտնվում 3000-ից ավելի կոթողներ, դրանց թվում ՅՈՒՆԵՍԿՈ-ի համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված Հաղպատ, Սանահին վանական համալիրները, Օձունի, Քոբայրի և Ախթալայի վանքերը, որոնք համայն մարդկության պատմամշակույթի արժեքավոր մաս են: Պատմական նշանակություն ունեն նաև մարզում գտնվող Լոռի բերդի փլատակները<Հռոմայրի եկեղեցին, Դորբանտավանքը, Կուրթանի Սուրբ Աստվածածին եկեղեցին, Հնեվանքը, Սուրբ Հովհաննես ուխտատեղին, Քոբայրի եկեղեցին, Ալավերդու միջնադարյան կամուրջը և այլն:Դրանք մեր մարզի այցեքարտն են:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


Վերջին տարիներին Հայաստանի ներգնա զբոսաշրջիկների թիվը աճի բավականին բարձր տեմպեր է գրանցում: Զբոսաշրջության զարգացման համակարգում հյուրընկալությունը համարվում է ամենաազդեցիկ կառուցվածքային բաղադրիչներից մեկը:

Միջազգային զբոսաշրջիկների թիվ



Գծապատկեր 18.
Հայաստան ժամանած
միջազգային զբոսաշրջիկների
թիվ,
հազ. մարդ


Ներքին զբոսաշրջիկների թիվ



Գծապատկեր 19.
Հայաստանի ներքին
զբոսաշրջիկների թիվ
/Միայն հյուրանոցներում,
հյուրանոցատիպ
հանգրվաններում,
առողջարանում և
հանգստյան տներում
հաշվառված զբոսաշրջիկներ/
հազ. մարդ

Ըստ վիճակագրական կոմիտեի 2020 թ. փետրվարի 5-ին հրապարակած տվյալների 2019թ-ին զբոսաշրջիկների թիվը հասել է 1,9 միլիոնի:


Գծապատկեր 20. Հյուրանոցային տնտեսության օբյեկտները



Քանի որ որպես համեմատական մարզ ընտրել ենք Տավուշի մարզը, հյուրանոցային ոլորտի համար նույնպես առանձնացրեցինք 2 մարզերի տվյալները ըստ Ազգային Վիճակագրության Ծառակության /ԱՎԾ/:

Աղյուսակ 10. Լոռու և Տավուշի մարզերում հյուրանոցային տնտեսությունների թիվը

Մարզ	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2019թ.
Լոռու մարզ	7	10	10	17	21	65
Տավուշի մարզ	31	38	41	47	67	130




Ինչպես տեսնում ենք 2 մարզերում էլ հյուրանոցային տնտեսությունների թիվը տարեցտարի ավելանում է, ինչը նշանակում է, որ դրանց պահանջարկը կա երկրում, հետևաբար՝ ոլորտն աճի պոտենցիալ ունի:

Լոռու մարզում գործում են 65-ից ավել հյուրանոցային տնտեսություններ, որոնց շնորհիվ Լոռին կարող է գիշերակացով 1624-ից ավել զբոսաշրջիկ:

2019 թ. Լոռու տուրիզմի զարգացման և հետազոտության կենտրոնը իրականացրեց հետազոտություն, պարզելու համար ,թե որքան զբոսաշրջիկ է գիշերակացով այցելել Լոռու մարզ և որ երկրներից: Ջեզ ենք ներկայացնում հետազոտության արդյունքները:


2019թ. ՄԱՐՏ, ԱՊՐԻԼ, ՄԱՅԻՍ ամիսներին գիշերակացով Լոռու մարզ այցելել է **15,216** զբոսաշրջիկ: Հարցման ընթացքում տվյալներ հաղորդել են միայն 20 հյուրանոցային տնտեսություն, սակայն հարցմանը մասնակցել է 40-ից ավել հյուրանոցային տնտեսություններ:

2019թ. ՀՈՒՆԻՍ, ՀՈՒԼԻՍ, ՕԳՈՍՏՈՍ ամիսներին գիշերակացով Լոռու մարզ այցելել է **42,457** զբոսաշրջիկ: Հարցմանը մասնակցել է 38 հյուրանոցային տնտեսություն, որոնց մեծամասնությունը հաղորդել է հաստատի տվյալներ:



2019թ. Լոռու մարզ այցելած Թուփ 10 Երկրները


Եվս մեկ հատված այն հետազոտությունից, որը իրականացրել ենք ՀՀ քաղաքացիների շրջանում, հասկանալու համար, թե նրանք Հայաստանի տարածքում հանգստի մեկնելիս որտեղ են նախընտրում գիշերել: Հարցմանը պատասխանել է 454 ՀՀ քաղաքացի, Լոռու, Տավուշի, գեղարքունիքի, Գիրակի մարզերից և Երևանից:



Գծապատկեր 21.

Ինչպես երևում է գծապատկերում, զբոսաշրջիկների մոտ 3/4-ն հանգիստն անցկացրել է հյուրանոցներում և հանգստյան տներում: Մակայն, հարցման արդյունքներից երևում է, որ զբոսաշրջիկներն իջևանել են նաև հյուրատներում և վարձով բնակարաններում: Հայաստանյան գնային զգայուն շուկայի համար այս սեգմենտի զարգացումը կարող է զբոսաշրջության համար էական խթան դառնալ:

Գծապատկեր 22. Վերջին 1 տարվա ընթացքում գիշերել էք հյուրատանը:




ՀԱՐՑ. Հայաստանում վերջին 1 տարվա ընթացքում գիշերել էք որևէ հյուրատանը: Խնդրում ենք գնահատել վերջին անգամ իջևանած հյուրատան պայմանները 1-4 բալանոց սանդղակով, որտեղ 1-ը ցածր է, իսկ 4-ը բարձր, :

Գիշերակացով հանգստի մեկնած զբոսաշրջիկների մոտ 1/3-ը գիշերել է հյուրատներում:

Հյուրատներում իջևանած զբոսաշրջիկները գնահատել են հյուրատների գները, սպասարկման որակը, շենքային պայմանները, սենյակների հարմարությունները, ժամանցի հնարավորությունները և սնունդը: Պատասխանները տրված են տոկոսով:

Գծապատկեր 23.
Իջևանած հյուրատան պայմանների գնահատում



Թերևս բացի գնի գործոնից, որն ակնկալածից ավելի բարձր էր, զբոսաշրջիկների գոհունակությունը հյուրատներում իրենց կեցությունից անհամեմատ ավելի դրական էր, քան բացասական:

Այցելուները հիմնականում գոհ են հյուրատներում իջևանելու իրենց փորձառությունից՝ սննդից, սպասարկման որակից, շենքային պայմաններից և սենյակի հարմարություններից: Սակայն, հանգստացողների բացարձակ մեծամասնության համոզմամբ, հյուրատների գները բարձր են: Հաշվի առնելով հյուրատների ծախսերի կառուցվածքը և հյուրատների քիչ քանակը, հյուրատնային բիզնեսի զարգացումը կրեթի ծառայությունների գնի նվազման: Ընդհանրապես, Հայաստանի զբոսաշրջային շուկայի հյուրատնային սեգմենտը շատ ավելի խորը ուսումնասիրության կարիք ունի պարզելու նրանց տարածվածությունը և զբոսաշրջիկների այն սեգմենտը, ովքեր նախընտրում են իջևանել հյուրտներում:

Վերջին տարիներին Հայաստանի ներգնա զբոսաշրջիկների թիվը աճի բավականին բարձր տեմպեր է գրանցվել: Զբոսաշրջության դինամիկ աճին մեծապես նպաստել է զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացումը, կարևոր դեր է խաղացել հյուրանոցային հանգրվանների և հանրային սննդի կետերի թվի ավելացումը և ծառայությունների որակի բարձրացումը: Լոռու մարզում նույնպես տարեցտարի հյուրատների քանակի զգալի աճ է նկատվում, ինչը վկայում է զբոսաշրջիկների աճի և պահանջարկի մասին: Հետազոտություններից պարզ է դարձել որ, հյուրատները հիմնականում պահանջարկված են ազգությամբ ոչ հայ զբոսաշրջիկների կողմից: Հյուրատունն առավել գրավիչ դարձնելու համար ցանկալի է, որ այն ունենա հայկական ավանդական կամ տվյալ վայրին բնորոշ ճարտարապետական դիզայն: Յուրաքանչյուր գյուղական բնակավայրում հնարավոր է ոչ մեծ գումարներով ձեռք բերել հնաժամ կահկարասի, որոնցով կարելի է հյուրատանը հաղորդել յուրօրինակ դիզայն և տվյալ բնակավայրի տիպիկ կենցաղային միջավայր: Ձեզ ենք ներկայացնում Լոռու մարզում գործող մի քանի կոլորիտային հյուրատներ:



ՀԵՔԻԱԹԻ ՏՈՒՆ / HOUSE OF FAIRY TALE

Կա մի հեքիաթային տուն Լոռվա Փամբակում, որտեղ ազգային բանահյուսությունը վերածնունդ է ապրում, նոր թևեր առնում և ամենքի մեջ հավատ ներշնչում, որ մեր ազգային դեմքն ու ավանդույթները դեռևս երկար դարեր կպահպանվեն ու սերնդեսերունդ կփոխանցվեն: Հեքիաթի Տունը ժամանակի մեքենայի պես մի հրաշքներով լի վայր է, որտեղի միջավայրում, վերապրելով հեքիաթը ու սուզվելով այստեղի ազգային դյուրիչ մթնոլորտի մեջ, հայտնվում ես հեռավոր անցյալում:



ԵՐԿՐԱԲԱՆԻ ՏՈՒՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀՅՈՒՐԱՏՈՒՆ

<<Երկրաբանի տուն>> ընտանեկան հյուրատունը գտնվում է Լոռու մարզում՝ Ստեփանավանի դենդրոպարկից 5 կմ հեռավորության վրա: Դա մի խաղաղ ու գեղեցիկ վայր է, շրջապատված գեղեցիկ բնությամբ: Երկրաբանի տան պատշգամբներից բացվում են հիասքանչ բնապատկերներ դեպի Բազումի լեռնաշղթա և Ստեփանավանի դենդրոպարկը շրջապատող անտառներ:



ՄԱԳՀԱՅ B&B

Շատ տարիներ առաջ մեկնարկած գործն օր օրի զարգանում է: Մագհայ B&B –ում հյուրեր են ընդունում աշխարհի տարբեր անկյուններից: Հյուրատունը ամենացանկալի գիշերակացով հանգստի վայրերից է վանաձորյան զբոսաշրջիկների շրջանում: Այսքան գեղեցկություն և ջերմություն մեկ վայրում, բառերով ուղղակի անհնար է նկարագրել, դա զգալ ու տեսնել է պետք:



ԻՐԻՍ B&B

Հյուրատունը գտնվում է լեռնային Հայաստանի հյուսիսում, Լոռվա գեղատեսիլ բնության գրկում, խելահեղ Դեբեդ գետի հարևանությամբ՝ Ալավերդի քաղաքի մի գողտրիկ անկյունում, իսկ Տիկին Իրինայի հետ շփվելը մեծագույն հաճույք է:



<<ՍԵՐԳՈՅԻ ՄՈՏ>> կամ ODZUN B&B

Եվս մեկ հրաշք վայր, որը գտնվում է գ. Օձունում: Նույնիսկ նկարների ընտրությունն էր շատ բարդ, քանի որ ամբողջը 1 նկարում անհնար է ներկայացնել: Հյուրատանը տիրում է ջերմ մթնոլորտ, հյուրերը հնարավորություն ունեն իրենց ձեռքով պատրաստել հայկական խոհանոցի համեղ կերակուրներ, մասնակցել մեղրի պատրաստմանը և համտեսին, մասնակցել օղի պատրաստելու գործընթացին, ինչու ոչ նաև մասնակցել գյուղատնտեսական աշխատանքներին:



POTTERY HOUSE ARMENIA

Հետաքրքիր կոլորիտով այս վարը և հյուրատուն է ,և արվեստանոց: Կավի տան նկուղը վերածվել է արվեստանոցի, որտեղ ցուցադրված են հայկական գյուղի կենցաղում օգտագործված հին իրեր ու գործիքներ: Հենց այս միջավայրում էլ աշխատում են կավով՝ պատրաստելով ցանկացած իր: Կավի տանը համալրվում է նաև երաժշտական գործիքների

հավաքածուն, որպեսզի այցելուները ե՛ւ ծանոթանան դրանց, ե՛ւ ուրախ ժամանցի հնարավորություն ունենան:

Շատ կարևոր է որ, հյուրատան ձեռներեցը գործունեությունն սկսելուց առաջ գնահատի, թե արդյոք նա և իր ընտանիքը պատրաստ են ընդունել հյուրատնային գործունեությունից բխող մարտահրավերները և արդյոք տիրապետում են հյուրատան կառավարման համար անհրաժեշտ հմտություններին:


Ձեռներեցը կարող է սեփական կարողությունները գնահատել ըստ ստորև բերված աղյուսակում ներկայացված կետերի:

Աղյուսակ 11. Ձեռներեցների սեփական կարողությունների գնահատման աղյուսակ

Պատրաստակամություն	Պատրաստվածություն
Բացարարել հյուրերի տարբեր պահանջները նրանց կացության ամբողջ ընթացքում Արդյունքում օրական աշխատելով 14-16 ժամ	Հաճախորդների սպասարկման հմտություններ / մասնավորապես, համայնքի և զբոսաշրջային վայրերի վերաբերյալ տեղեկացվածություն, տարատեսակ ուտեստների պատրաստում, հատկապես տեղին բնորոշ ավանդական ճաշատեսակներ/
Ընդունել և սպասարկել տարբերի մտածելակերպ և հայացքներ ունեցող հյուրերի	Բիզնեսի պլանավորման բազային հմտություններ
Համակերպվել տան որոշ հարմարություններից /հեռուստացույց, հեռախոս/ օգտվելու հնարավոր սահմանափակումներից	Հաշվապահական և մարքեթինգային հմտություններ
Մարել հյուրատան հաշվապահությունը, իրականացնել հյուրատան առաջնությունը, շփվել հարկային և այլ տեսչական մարմինների հետ	Համապատասխան օրենսդրության իմացություն

Աղբյուրը՝ Հյուրատնային ոլորտը Հայաստանում / www.smednc.am

Լոռու մարզում գործող հյուրանոցները գտնվում են բարվոք վիճակում: Սակայն հյուրանոցների մեծ մասը ունեն գովազդի և տուրօպերատորների հետ համագործակցության պակաս: Հետազոտություն ենք իրականացրել տուրօպերատորների շրջանում և ՀՀ քաղաքացիների, հասկանալու համար սոց. Փաթեթով որտեղ են հանգստացել:




Գծապատկեր 24.
ՀԱՐՑ. 1-2 գիշերակացով սոց. փաթեթի շրջանակներում որտեղ եք հանգստացել:

Սոց. փաթեթով հանգստացողները դարձյալ գերադասել են «ավանդական» ուղղությունները, հիմնականում նախընտրելով Ծաղկաձորը, Սևանը, Դիլիջանը, Աղվերանը և Արցախը: Հարցմանը մասնակցած 454 քաղաքացիներից միայն 1 տոկոսն է հանգստացել Լոռու մարզի Թեթ Լեռ հանգստյան տանը, որը ակտիվ գործունեություն է ծավալում և համարվում է ամենալավ հյուրանոցային համալիրներից մեկը Լոռու մարզում և ոչ միայն:

Հյուրանոցային սպասարկման համակարգի անընդհատ բարելավումը, սպասարկման համակարգի ընդլայնումը, տարածքների վերանորոգումը և արդի պահանջներին համապատասխան ձևավորումը, նոր տեխնոլոգիաների ներդրումը, սպասարկման համակարգի բարելավման առաջին գործոններից են:

Հյուրանոցային սպասարկման հիմնախնդիրներից են նաև սպասարկման որակի կառավարման հիմնահարցերը: Այսպես՝ Սպասարկման «Ոսկե» կանոնի համաձայն՝ հյուրերին պետք է սպասարկել այնպես, ինչպես դուք կցանկանայիք, որ ձեզ սպասարկեն:



Գծապատկեր 25,
ՀԱՄՑ 1-2 գիշերով (գիշերակացով)
հանգստի/ արշավի համար
հյուրանոց/ հանգստյան տուն/
հյուրատուն կամ այլ կացարան
ընտրելիս ի՞նչն էք կարևորում

Գործոնների մեջ բացարձակ առաջատարը սնունդն է՝ 72.4 տոկոս: Այնուհետև՝ անլար ինտերնետ կապի հնարավորությունը: Հաջորդ էական չորս գործոնների մասին նշել է ռեսպոնդենտների մոտ 40 տոկոսը: Ընդ որում, լողավազանի առկայությունը նվազ կարևոր է, քան օդորակման համակարգի առկայությունը:

Լոռու մարզի հյուրանոցային համալիրների ղեկավարների ներքին տուրիզմի ամենամեծ խնդիրը համարում են մարզի տեսարժան վայրերի մասին գովազդի պակասը: Նրանք առաջարկում են գովազդ Լոռու մարզի գեղեցիկ վայրերի և այնտեղ առաջարկվող ծառայությունների մասին: Նրանք գովազդը համարում են տեղեկատվության տարածման ամենալավ գործիքը:

Որպես հիմնախնդիր նշվում է նաև այն, որ Վանաձորում չկան հետաքրքիր, գեղեցիկ, երիտասարդական ժամանցի վայրեր, կենտրոններ: Այգիները աղտոտված են, և առաջարկվող ոչ մի ծառայություն չկա զբոսայգիներում: Այդ իսկ պատճառով հաճախ Վանաձորում հանգստացողները, հյուրերը նախընտրում են պասիվ հանգիստ՝ հյուրանոցի կամ հյուրատան տարածքում:

Նշվում է, որ հետաքրքիր ժամանցի վայրերը քիչ են կամ չկան, բայց կա պոտենցիալ Վանաձորում և Լոռու մարզում դրանք ստեղծելու և զարգացնելու համար: Ռեսպոնդենտներից մեկը նշել է, որ եթե իրականություն դառնա Մայմեխում լեռնադահուկային համալիր կառուցելու ծրագիրը, զբոսաշրջիկների, մանավանդ երիտասարդ զբոսաշրջիկների հոսքը դեպի մարզ էապես կավելանա:

Ձեզ ենք ներկայացնում Լոռու մարզում գործող ակտիվ հյուրանոցներից, հյուրատներից մի քանիսը: Իսկ հյուրանոցային տնտեսությունների մասին ավելի մանրամասն տեղեկություն ստանալու համար դիմեք Լոռու Տուրիզմի Զարգացման և Հետազոտության Կենտրոն կամ գրեք lori.develo.research@gmail.com:



ԿԻՐԱՎԱԿԱՆ ՀՅՈՒՐԱՆՈՑ

«Կիրովական» հյուրանոցը 1980թ. Վանաձորում բացված առաջին 3 աստղանի հյուրանոցն է: Այն գտնվում է բարձրադիր վայրում, որտեղից բացվում է հիասքանչ տեսարան դեպի մոտակա լեռներ, լճեր և Վանաձոր քաղաք:

Այստեղ տիրում է արևելյան մթնոլորտը, իսկ ժամանակակից հարմարությունները, սենյակների հարմարավետությունը և վայելչությունը կդարձնեն

ձեր հանգիստն անմոռանակի: Ծառայությունները մատուցվում են հայկական ավանդական հյուրընկալության ոգով:



ԹԵԺ ԼԵՌ ՀԱՆԳՍՏՅԱՆ ԳՈՏԻ

Բարի գալուստ Լոռվա գեղատեսիլ բնաշխարհի ամենատեսարժան և գողտրիկ վայրերից մեկը՝ Թեժ լեռ, որի մտերիմ հարևանությամբ և փարթամ անտառներով շրջապատված՝ տեղակայված է համանուն հանգստյան տունը:

Վերանորոգված և դիզայներական ինքնատիպ լուծումների շնորհիվ նոր տեսք ստացած հանգստյան տունն իր բազմատեսակ ծառայություններն է առաջարկում ձեզ տարվա բոլոր եղանակներին: Մեզ

մոտ դուք կարող եք վայելել խաղաղ հանգիստ անմիջապես բնության գրկում, համտեսել համեղ և առողջ սնունդ, հիանալով գեղեցիկ բնապատկերներով՝ ըմբռնել սոճիների թարմ ու առողջարար օդը և, ոչ պակաս կարևոր է, անհրաժեշտության դեպքում հանգիստը զուգակցել աշխատանքի հետ:



ՍՈՃՈՒՏ ՀԱՆԳՍՏՅԱՆ ՏՈՒՆ

«Սոճուտ» հանգստյան տունը գտնվում է Հայաստանի հանրապետության Լոռվա մարզի Գյուլագարակ գյուղում, ծովի մակերևույթից շուրջ 1450 մետր բարձրության վրա՝ եղնինների ու սոճիների բնական անտառում:

Հանգստյան տունը Վանաձոր քաղաքից գտնվում է 24 կմ դեպի հյուսիս, իսկ Ստեփանավան

քաղաքից 14 կմ դեպի հարավ հեռավորության վրա՝ Բազումի լեռնաշղթայի հյուսիսային լանջին: Ամռանը կլիման զով է, ձմռանը՝ մեղմ: Հանգստյան տունը շրջապատված է սոճիների անտառով, որտեղ օդը առավելագույնս զերծ է փոշուց և վնասակար նյութերից, հագեցած է ֆիտոցիդներով և օզոնով: Այն օժտված է բուժական հատկություններով և նպաստավոր է հատկապես թոքային հիվանդություններով տառապող անձանց համար:



ԱՎԱՆ ՁԵՐԱԳԵՏ ՀՅՈՒՐԱՆՈՑ

Ավան Ձորագետ հյուրանոցը գտնվում է ժայռերի միջով հոսող Դեբեդ գետի ափին: Հյուրանոցն ունի 54 հյուրային համար, որոնց թվում հարմարավետ և նրբաճաշակ ստանդարտ և լյուքս սենյակներ՝ ձևավորված ձեռագործ զարդարանքներով: Ավան Ձորագետ ռեստորանը հնարավորություն է տալիս հյուրերին համտեսել հայկական և վրացական խոհանոցի ուտեստները, ընդ որում ինչպես ռեստորանի ներսում այնպես էլ բացօթյա տեռասում՝ վայելելով Դեբեդ գետի հրաշագեղ տեսարանը:




ՔԵՖԻԼՅԱՆ ՀՅՈՒՐԱՆՈՑ

«Քեֆիլյան» հյուրանոցը տեղակայված է Հադպատ գյուղում, միջնադարյան Հայաստանի նշանավոր կառույցներից մեկից՝ Հադպատավանքից ոչ հեռու: «Քեֆիլյան»-ը ոչ մեծ և հարմարավետ հյուրանոց է: Զանազան համարներ ու բարեհամբույր աշխատակազմ. ամեն ինչ արված է Ձեր լիակատար հանգստի համար: «Քեֆիլյան» հյուրանոցն առանձնանում է էլեգանտ ինտերյերով և էքստերյերով, լուսամուտներից՝ ՏՅ բացվում է Դեբեդ գետի կիրճի գեղատեսիլ տեսարան:

Լոռու ՏԶՀ Կենտրոնի կողմից իրականացված հետազոտությունների և հյուրանոցային ոլորտի ներկայացուցիչների հետ կազմակերպված դասընթացների արդյունքում պարզ դարձավ, որ Լոռու մարզում գործող հյուրանոցային տնտեսությունները, հատկապես հյուրատները ունեն իրենց զբոսաշրջային պրոդուկտը ճիշտ ներկայացնելու և ՀՀ զբոսաշրջային ոլորտում ճանաչելի դառնալու խնդիր: Հետևյալ գծապատկերը կօգնի նորաբաց և ոչ ակտիվ գործունեություն ծավալող հյուրանոցային տնտեսությունների ներկայացուցիչներին, ճիշտ քայլեր կատարելով հասնել հաջողության զբոսաշրջային ոլորտում:

Գծապատկեր 26. Հյուրանոցի/հյուրատան զարգացմանը նպաստող գործողություններ



Քանի որ, ժամանակակից կյանքը մեծապես կախված է ԻՆՏԵՐՆԵՏից, *Ինտերնետային կայքերից, սոցիալական ցանցերից*, մարդկանց մեծ մասը իրենց հետաքրքրող ցանկացած տեղեկատվություն գտնում է համացանցում: Այս իսկ պատճառով ցանկացած ոլորտում շատ կարևոր է համացանցում ներկայանալի և ճիշտ գործունեություն ծավալելը: Զբոսաշրջության մեկնելիս, զբոսաշրջային վայրերի, կացարանների մասին տեղեկատվություն զբոսաշրջիկը գտնում է համացանցում, առաջին տպավորությունը տվյալ վայրի մասին ստանում է *նկարներից, տեսահոլովակներից, գովազդներից*, այդ իսկ պատճառով շատ կարևոր է որակյալ նկարների առկայությունը: Անկախ տարիքից և սեռից պետք է միշտ կրթվել, զարգանալ, հաճախ տարբեր կազմակերպություններ կազմակերպում են դասընթացներ մարքեթինգի, բիզնեսի, հյուրանոցային տնտեսությունների զարգացման վերաբերյալ, որը շատ ողջունելի է և հեշտացնում է մեր կյանքը: Գծապատկեր 25-ը զբոսաշրջային ոլորտի ներկայացուցիչներին կօգնի ճիշտ քայլեր կատարելով առաջ գնալ, ճիշտ և որակյալ ներկայացնել իրենց պրոդուկտը ամենուր:

Ինտերնետը գովազդի տեսանկյունից ևս լայն հնարավորություններ է ընձեռում կազմակերպություններին, որոնք օգտվելով ինտերնետային գովազդի բազմաթիվ գործիքներից, հաջողությամբ առաջխաղացնում են իրենց բրենդները և ծառայությունները:

*Բիզնես իրականացնել առանց գովազդի, դա նույնն է, որ աղջկան աչքով անես խավարում
Ստյուարտ Բրիտտ*

Զմոռանալ նշել ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ կարևորության մասին: Բիզնեսի ցանկացած ոլորտում շատ կարևոր է համագործակցել տարբեր կառույցների հետ: Ներկայացնենք մեկ օրինակ, վերցնելով հյուրատնային ոլորտը, որտեղ շատ կարևոր է համագործակցությունը

- համագործակցել համայնքի բնակիչների հետ,
 - ✓ ապահովել աշխատատեղ համայնքի բնակիչների համար,
 - ✓ գնել գյուղմթերք հենց ձեր հյուրատան տարածքի բնակիչներից,
- համագործակցել Տեղական Ինքնակառավարման Մարմինների հետ,
 - ✓ մասնակցել նրանց կողմից կազմակերպված հանդիպումներին,
 - ✓ ժողովներին, ներկայացնել հյուրատունը, ճանաչելի դարձնել մարզում,
- զբոսաշրջային տարբեր կառույցների հետ, օրինակ՝
 - ✓ Հյուրատնային ասոցացիա
 - ✓ Լոռու ՏԶՀԿ Կենտրոն
 - ✓ ՀՀ տարբեր մարզերում գործող Զբոսաշրջիկների տեղեկատվական կենտրոններ
- համագործակցել տուրօպերատորների հետ, որպեսզի մարզ այցելելիս գիշերեն ձեր հյուրատանը կամ օգտվեն ձեր հյուրատան ծառայություններից,
- համագործակցել տարբեր զբոսաշրջային ծառայություններ մատուցող կառույցների հետ, հյուրերի պահանջները և նախասիրությունները բավարարելու նպատակով: Որի արդյունքում նրանք հյուրատնից կհեռանան գոհ, կրկին վերադառնալու ցանկությամբ: Օրինակ՝
 - ✓ Համագործակցություն զբոսավարների հետ,
 - ✓ արկածասերների համար համագործակցություն արկածային

- տուրիզմի ծառայություններ մատուցող կառույցների հետ,
- ✓ վարպետաց դասեր սիրողների համար՝ վարպետների հետ
- ✓ վարձույթով վրաններ, հեծանիվներ տրամադրող կառույցների հետ
- ✓ Տրանսպորտային ծառայությունների հետ, տաքսի, ավտոբուս, միկրոավտոբուս,
- ✓ Մանդի կետերի, ռեստորանների հետ
- ✓ Հայաստանի տարբեր մարզերում գործող հյուրանոցային տնտեսությունների հետ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ՄԻ ՔԱՆԻ ՕՐ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՄԲ ՏՈՒՐԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ

Տուրօպերատորների ծավալած գործունեությունն ուսումնասիրելիս պարզ դարձավ, որ Լոռու մարզ այցելում են հիմնականում առանց գիշերակացի, կազմակերպվում են 1 օրյա տուրեր, այն էլ հիմնականում <<ավանդական>> տեսարժան վայրեր:

Տուրօպերատորների շրջանում նկատվում է անվստահություն Լոռու մարզում գործող հյուրանոցների, հյուրատների, առողջարանների հանդեպ: Դրա գլխավոր պատճառն այն է, որ մարզի գիշերակաց ապահովող կազմակերպությունների ընդամենը մի մասն է համացանցում լիարժեք ներկայացված, այդ իսկ պատճառով շատ քիչ տեղեկատվություն կարող են գտնել մարզի հյուրանոցների, հյուրատների ծառայությունների տրամադրման որակի վերաբերյալ: Եվ հենց այս խնդրի պատճառով է, որ տուրօպերատորները նախընտրում են կազմակերպել 1 օրյա տուր դեպի Լոռու մարզ:

Ինչպես նաև շատ հյուրանոցներ բոլորովին չեն ընկալում հատուկ կամ զեղչված գների քաղաքականության իմաստը և ըստ նրանց տուրօպերատորն ընդամենն անհարկի միջնորդ է: Հյուրանոցների մեծ մասը <<կորպորատիվ>> հաճախորդներին տրամադրում է ավելի ցածր սակագներ, քան տուրօպերատորներին: Անմիջապես նկատենք, որ այս մտավախությունը տեղին չէ, քանի որ կորպորատիվ պատվերներն այսպես, թե այնպես լինելու են, սակայն հարցը միայն պատվիրատուի մասին է: Եթե տուրօպերատորներն ունենան շուկայում ամենացածր արժեքները, ապա բոլորը կաշխատեն նրանց միջոցով: Այս փորձը կիրառվում է բազմաթիվ զարգացած երկրներում պետական կառավարման և կանոնակարգման միջոցով և դրանցից զբոսաշրջային հոսքերը ոչ միայն չեն պակասում, այլ ավելանում են:

Ինչպես նաև երկարաժամկետ հանգիստը /3-12 օր/ մեծացնում է ֆինանսական հոսքերի կանխատեսելիությունը, մեծացնում է մեկ զբոսաշրջիկից մեկ օրում ակնկալվող եկամուտը / *Հավանականությունը, որ զբոսաշրջիկը 12 օրում կօգտվի հյուրանոցի որևէ լրացուցիչ ծառայությունից ավելի մեծ քան 1-2 օրում* /, նվազեցնում ծախսերը / *Ամբողջական կամ կիսապանսիոնի դեպքում «շվեդական սեղան» սննդակարգի դեպքում հաճախորդներն առաջին երկու օրը «նորմայից» ավել սնունդ են վերցնում* /, դյուրացնում ռեսուրսների կառավարումը: Հետևաբար, երկարաժամկետ հանգիստը էականորեն կարող է մեծացնել Հայաստանի զբոսաշրջային շուկան:

Աշխատանքային օրերին հյուրանոցների զբաղվածության մակարդակի բարձրացումը

կմեծացնի հյուրանոցների ու հյուրատների դրամական ներհոսքերը և հնարավորություն կտա իջեցնել հյուրանոցների ու հյուրատների գները, քանի որ վերջիններիս կախվածությունը կարճաժամկետ զբոսաշրջությունից կնվազի:

Լոռու մարզում զբոսաշրջային ոլորտը դեռ շատ զարգանալու տեղ ունի, սակայն շատ հյուրոնցային տնտեսություններ պատրաստ են հյուրեր ընդունել և ճանապարհել բարձր մակարդակով, քանի որ Լոռու մարզում ունենք և՛ որակյալ հյուրանոցային համալիրներ, և՛ տարբեր զբոսաշրջային տեսակներից օգտվելու հնարավորություններ: Դրանք են՝

Գծապատկեր 27.


ԼՈՌԻՈՒՄ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՏՈՒՐԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Պատմամշակութային	Ճանաչողական	Հնագիտական
Կրոնական	Գյուղական զբոսաշրջություն	Գաստրոնոմիկ զբոսաշրջություն
Ագրոզբոսաշրջություն	Քաղաքային զբոսաշրջություն	Էկոզբոսաշրջություն
Արկածային	Էքստրեմալ	Առողջարանական զբոսաշրջություն

**ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈՐՈՐՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՐՈՂ Է ՈՒՆԵՆԱԼ ՀԵՏԵՑԱԼ
ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ**

Եվ որպես վերջաբան ձեզ ենք ներկայացնում հետևյալ գծապատկերը:

Գծապատկեր 28.



Աղբյուրը՝ <<Լոռու մարզի զբոսաշրջության զարգացման հնարավորությունների հետազոտություն>>, 2014թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1.

ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Միջոցառման անվանումը	Վայրը	Ժամկետը
«Լոռվա Ձմեռ» մարզատոնահանդես	Թեժ լեռ	Փետրվար
Տեարնընդառաջի արարողություն	Մարզի տարբեր գյուղական համայնքներում	Փետրբար
Ռաֆտինգ ֆեստ 2020թ.	Թումանյան	Մայիսի 30-31
Հայկական խոհանոցում օգտագործվող բույսերը	Դսեղ	Լույիսի
Հապալասի փառատոն	Մարգահովիտ	Հուլիսի
Վարդավառի արարողություն	Մարզի տարբեր գյուղական համայնքներում	Հուլիս
Ծաղկի տոն	Ստեփանավան	Հուլիս-օգոստոս
«Խորովածի փառատոն»	Ախթալա	Օգոստոսի-սեպտեմբեր
«Թումանյանական հեքիաթի օր» տիկնիկային թատրոնների	Դսեղ	Սեպտեմբեր
Թատերական Լոռի	Ալավերդի	Սեպտեմբեր
«Պանրի փառատոն»	Տաշիր	Սեպտեմբեր-Հոկտեմբեր
«Բերքի տոն»	Լոռու մարզի համայնքներում	Հոկտեմբեր
Վանաձորի օր	Վանաձոր քաղաքում	Հոկտեմբեր

Անվանումը	Համառոտ բնութագիր	Գտնվելու վայր
«Լոռի-Փամբակ» երկրագրտական թանգարան	Հիմնադրվել է 1938թ., հնագետ Եղիա Մոմջանի կողմից: Թանգարանում առկա է շուրջ 34 հազար նմուշ: Նմուշները թվագրվում են Ք.ա. 4-րդ հազարամյակից մինչ մեր օրերը: Թանգարանում գործում է հնագիտական, ազգագրական և նորագույն պատմության բաժիններ:	ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 1
Կերպարվեստի թանգարան	Ստեղծվել է 1974թ., որպես ազգային պատկերասրահի մասնաճյուղ: 1979 թվականից ինքնուրույն կարգավիճակ ստանալով՝ անցել է քաղաքային ենթակայության: Թանգարանում առկա է շուրջ 1700 աշխատանքներ:	ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 52
Ստ.Զորյանի տուն-թանգարան	1962-1964թթ. կառուցված առանձնատունը 1983թ. ՀՍՍՀ Մշակույթի նախարարության կողմից հաստատվեց որպես տուն-թանգարան: Այն ունի 7 սրահ, որից 2-ը որպես աշխատասենյակ, մեկը՝ ննջարան: Տուն-թանգարանում առկա է շուրջ 2000 միավոր ֆոնդային ցուցանմուշներ:	ք. Վանաձոր, Զորյանի 24
Միկոյան եղբայրների տուն-թանգարան	Հիմնադրվել է 1982թ.: Տուն-թանգարանում արտացոլվում են Միկոյան եղբայրների աշխատանքների գործունեությունը: Առկա է հայրական տան ցուցանմուշներ, լուսանկարներ:	ք. Ալավերդի, Սանահին Սարահարթ
ՀՀ Ազգային պատկերասրահի Ալավերդու մասնաճյուղ	Ստեղծվել է 1987թ., որի հիմնական ցուցադրությունը կազմված է հայ նշանավոր նկարիչներ՝ Հ. Կոջոյան, Փ. Թերլեմեզյան, Գ. Խանջյան, Հ. Կալենց և այլոց կտավներից: Թանգարանում պարբերաբար անցկացվում են մշակութային միջոցառումներ:	ք. Ալավերդի
Հ. Թումանյանի տուն-թանգարան	Ստեղծվել է 1939թ.: 1994 թվականին Թումանյանի սիրտը թաղվեց թանգարանի բակում: Պահպանվում են հայրական տան իրերը, անձնական իրերը, կյանքին ու գործունեությանը վերաբերող փաստաթղթեր:	գ. Դսեղ
Երկրագիտական թանգարան	Հիմնադրվել է 2007թ.: Ցուցանմուշները դասակարգված են հնագիտական, ազգագրության և նորագույն պատմության բաժիններով: Թանգարանում առկա է շուրջ 1000 ցուցանմուշ: Թանգարանը համագործակցում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Լոռու մարզի հուշարձանների պահպանության կոմիտեի հետ:	գ. Մարգահովիտ
Ստ. Շահումյանի տուն-թանգարան	1934թ. Ստեփանավանի շրջխորհրդի գործկոմի որոշմամբ Ս. Շահումյանի աներոջ տունը վերածվել է որպես Ս. Շահումյանի տուն-թանգարան: 1991թ. ՀՀ կառավարության որոշմամբ այն վերանորոգվեց որպես մշակույթի և ժամանցի կենտրոն՝ իր մեջ ներառելով նաև թանգարանային բաժինը: Ցուցադրության է ներկայացված 58, իսկ ֆոնդերում առկա է 1515 ցուցանմուշ:	ք. Ստեփանավան Նժդեհի 4
Լոռվա կենցաղի և մշակույթի թանգարան	ՀԱՊԹ-ի Կոջոթանի մասնաճյուղը բացվել է 1989թ.: 1997 թվականից անցել է համայնքային ենթակայության տակ: Առկա է 105 հնագիտական, 359 ազգագրական ցուցանմուշ և Լոռու ազգագրական կահավորված սենյակ:	գ. Կուրթան
«Սպիտակի թանգարան» ՊՈԱԿ	Թանգարանը ստեղծվել է 1980թ.: Վերաբացվել է 2006թ.: Թանգարանը գործում է մշակույթի պալատի ներքնահարկում: Առկա է շուրջ 2155 հնագիտական և ազգագրական ցուցանմուշ, որոնց թվում նաև կերպարվեստի գործեր:	ք. Սպիտակ, Ա. Ավետիսյան 1

Հուշարձան	Կառուցված	Գտնվելու վայր	Քաղաք / գյուղ	հավելյալ նշումներ
Կամուրջ «Հովսեփանց»	18-րդ դ.	Շահումյանի հրապարակում	Վանաձոր	Վանաձոր գետի վրա
Կամուրջ (Սանահնի կամուրջ)	1195 թ.	քաղաքի կենտրոնում, Սանահնի տանող հին ճանապարհին, Դեբեդ գետի վրա	Ալավերդի	միաթռիչք, պատերի վրա առյուծների հարթաքանդակներ, կառուցել է Վանենի թագուհին
Կամուրջ	1927 թ.	քաղաքից 1 կմ հս, Օլան-Լոռե գետի վրա, Աչաջուր տեղանքում	Ստեփանավան	
Կամուրջ		Տաշիրի ձորում	Տաշիր	Ավերված
Կամուրջ	12-13-րդ դդ.	գյուղից հս-աե, Ձորագետի վրա	Ագարակ	վերականգ. 19 դ.
Կամուրջ	1893 թ.	Ագարակի ձորում, Ձորագետի վրա		Արձանագիր
Կամուրջ	13 դ.	Մարցաջուր գետակի վրա	Դսեղ	պահպանվել է ձախակողմյան խելը
Կամուրջ Երկաթուղու	19 դ.	Փամբակ գետի վրա	Եղեգնուտ	Քառաթռիչք
Կամուրջ	17 դ.	գյուղի ամ մասում, Մանստև գետակի վրա	Թեղուտ	Միաթռիչք
Կամուրջ	11-12-րդ դդ.	Միսխանա գետի վրա	Լոռի բերդ	
Կամուրջ	11-12-րդ դդ.	Ձորագետի և Միսխանա գետերի միացման մասում		Ավերված
Կամուրջ	միջնադար	Լորուտ գետի վրա	Լորուտ	
Կամուրջ	միջնադար	Լորուտ գետի վրա		
Կամուրջ	12-13-րդ դդ.	գյուղի ամ եզրում, Տուտկաջուր վտակի վրա	Կողես	
Կամուրջ	12-13-րդ դդ.	Ձորագետի վրա	Կուրթան	ավերված, պահպանվում են հետքերը
Կամուրջ	13 դ.	Շերեք գետակի վրա, Զրադացաձորում	Հաղպատ	
Կամուրջ	12-13-րդ դդ.	Քարինջ-Մարց գյուղերի միջև, Քարինջ գյուղից 1 կմ հեռու, ճանապարհի աջ կողմում, Մարցաջուր գետի վրա	Մարց	պահպանվել են խելերը
Կամուրջ	15-17-րդ դդ.	Իգատակ գյուղատեղիից 1 կմ հվ, Մարցաջուր գետի վրա		Ավերված
Կամուրջ Մոտկորի	12-13-րդ դդ.	Մարցաջուր գետի վրա, գյուղից 3 կմ հեռու՝ Լորուտի ճանապարհին		Ավերված
Կամուրջ	13 դ..	գյուղի հս-աե եզրին, Յաղդան-Կողես ճանապարհի աջ կողմում, Յաղդանջուր վտակի վրա	Յաղդան	

Կամուրջ	17-18-րդ դդ.	գլխավոր մայրուղուց Քարինջ թեքվող ճանապարհից աջ, Մարց գետի վրա	Քարինջ	ավերված, պահպանվել են խելերը
---------	--------------	--	--------	---------------------------------

Հավելված 4.

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՀՈՒՇԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Հուշարձան	Կառուցված	Գտնվելու վայր	Քաղաք / գյուղ	հավելյալ նշումներ
Հուշաղբյուր Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1951 թ.	2 մասնաշենքի պատի տակ	Վանաձոր	տեղափոխվել է Վանաձոր գետի վերին հոսանքից, քանդակագործ Մեհրաբ
Հուշաղբյուր՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1960-ական թթ.	Տարոն 4 թաղամասում		նախկին Ղշաղ գյուղի կենտրոնում
Հուշաղբյուր՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1953 թ.	Խնձորուտ թաղամաս, Վանաձոր-Դիլիջան ճանապարհի ձախ եզրին		քանդակագործ Մեհրաբ
Հուշաղբյուր՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1955 թ.	քաղաքի կենտրոնական Գերեզմանոցում		քանդակագործ Մեհրաբ
Աղբյուր	1255 թ.	Սանահին վանքից ամ, թաղամասի եզրին	Ալավերդի	վերականգնվել է 1951-1952 թթ.
Հուշաղբյուր՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1946 թ.	քաղաքի մեջ		ճարտ.՝ Ռ. Իսրայելյան
Հուշաղբյուր՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1961 թ.	Սանահին թաղամասում, դպրոցից 100 մ հս-ամ		ճարտ.՝ Ռ. Հակոբյան
Աղբյուր	1831 թ.	վանքի բակում, հս պարսպապատի մեջ		կառուցել է վանքի առաջնորդ Հ. Տեր- Բարսեղյանցը
Հուշաղբյուր՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1972 թ.	քաղաքի կենտրոնում	Շամլուղ	
Աղբյուր	1950 թ.	գյուղի կենտրոնում	Ագարակ	
Հուշաղբյուր՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1968 թ.	գյուղի կենտրոնում	Անտառամուտ	
Աղբյուր «Օձի պորտ»		համալիրից 100 մ հս- ամ	Արդվի	ըստ ավանդության ունի հիվան- դություններ բուժելու հատկություն

Հուշաղբյուր «Ալ. Պուշկինի հանդիպումը Ալ. Գրիբոյեդովի դիակառքին»	1930- ական թթ.	ցյուլից 1.5 կմ հվ, Գարգառ-Վանաձոր ճանապարհին	Գարգառ	Ճարտ.՝ Մ. Մազմանյան, քանդ.՝ Ա. Սարգսյան
Հուշաղբյուր՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին («Ժամի աղբյուր»)	1949 թ.	ցյուլի մեջ	Գյուլագարակ	
Հուշաղբյուր Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1947 թ.	ցյուլի կենտրոնում	Դսեղ	
Հուշաղբյուր՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1968 թ.	ցյուլի մեջ		
Աղբյուր նավաքարով	13-15-րդ դդ.	եկեղեցուց ամ		
Հուշաղբյուր	1908 թ.	ցյուլի մեջ	Լեջան	
Հուշաղբյուր՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1946 թ.	ցյուլի մեջ	Ծաթեր	
Հուշաղբյուր՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1967 թ.	ցյուլի մեջ	Կաթնաջուր	
Հուշաղբյուր՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1950-60 ական թթ.	ցյուլի մեջ, ձոր տանող ճանապարհի ձախ եզրին	Կուրթան	
Հուշաղբյուր	1972 թ.		Հագվի 7.58/9	
Հուշաղբյուր	20 դ. սկիզբ	ցյուլի հվ-ամ մասում		
Հուշաղբյուր՝ Գնդապետ Հ. Օհանյանին	1975 թ.	Գյուղում		Է. Օհանյանի տան մոտ
Աղբյուր	13 դ.		Հաղպատ	
Հուշաղբյուր՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1960 թ.	Ալավերդի-Ախթալա ճանապարհի ձախ կողմում		
Հուշաղբյուր՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1963 թ.	ցյուլի կենտրոնում		
Աղբյուր	1258 թ.	շրջապարսպից 100 մ աե		Կառուց. է վանքի առաջնորդ Հովհաննեսը: Վերակառ. է 1827 թ.
Աղբյուր	19 դ.	ցյուլի կենտրոնում	Հովհաննաձոր	
Հուշաղբյուր՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին		ցյուլի խնայրամարկղի մոտ	Ճոճկան	
Հուշաղբյուր	1981 թ.	ցյուլի կենտրոնում	Մարց	
Աղբյուր			Մղարթ	
Հուշաղբյուր՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1961 թ.	ցյուլի մեջ	Շնող	

Հուշադրյուր՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1949 թ.	գյուղի մեջ	Սարահարթ	
Հուշադրյուր	1966 թ.	գյուղի կենտրոնում	Վարդաբլուր	
Հուշադրյուր	1960 թ.	գյուղի մեջ	Օձուն	
Հուշադրյուր՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1946 թ.	գյուղի կենտրոնում	Ամոջ	

Հավելված 5.

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՌԱՎԵԼ ԴԻՏԱՐԺԱՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները Լոռու մարզում ներառում են շուրջ 3045 հուշարձան: Լոռու մարզի հուշարձանները հիմնականում հանրապետական նշանակության են և կարող են ընդգրկվել ՀՀ զբոսաշրջային ռազմավարական նշանակություն ունեցող երթուղիներում: Մարզի հուշարձանները թվագրվում են Ք.ա. 5 հազ. տարուց մինչև մեր օրերի նորակառույցները: Մարզի տարածքում են գտնվում համաշխարհային մշակութային ժառանգության օբյեկտների ցանկում (ՅՈՒՆԵՍԿՕ) ընդգրկված երկու հուշարձան՝ Հաղպատի ու Սանահինի հրաշակերտ վանական համալիրները:

Հուշարձան	Կառուցված	Քաղաք / գյուղ	Գտնվելու վայր	հավելյալ նշումներ
Ամառանոց Թաիրովի	19 -րդ դ.	Վանաձոր	Զաքարյան փող. 31	Մեծահարուստ Թաիրովի ամառանոցն է եղել, այժմ Գուգարաց թեմի առաջնորդարանն է: Շրջակ. կան տարբեր տեղերից բերված կոթողային հուշարձաններ
Բերդեն թագավորանիստ	Ք.ա. 4-1 հազ., հելլեն. շրջ., միջնադ.		Տանձուտ և Փամբակ գետերի միախառնման վայրում	համանուն բլրի վրա
Եկեղեցական համալիր Մբ. Աստվածածին	13-14 դդ. 1831 թ.		Փամբակ և Տանձուտ գետերի միախառնման վայրում, բլրի վրա	
Եկեղեցի	1895 թ.	Վանաձոր	կայարանամերձ հրապարակից ամ, երկաթուղայինների զբոսայգում	խաչաձև հատակագծով կենտրոնագմբեթ ռուսական Եկեղեցի
հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1969 թ.		Հաղթանակի փողոց, անտառափեշի թեթության վրա	խորաքանդակներով զարդարված երկու հենապատեր՝ կենտրոնում հուշապույն, հավերժական կրակով
հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին քիմիագործներին	1969 թ.		Քիմիագործների զբոսայգում	բազալտե պատվանդանի վրա զինվորի կիսանդրի
Ամրոց «Կոշաբերդ»	10-13-րդ դդ.	Ալավերդի	Սանահին թաղամասից 5 կմ հվ	
Խճանկար Հ.Թումանյանի	20-րդ դ.		քաղաքի մեջ	հեղ.՝ Հ. Ռուսկյան

Վանական Համալիր Սանահին	10-13-րդ դդ.		Սանահին թաղամասի կենտր. բարձրադիր մասում	
-------------------------------	-----------------	--	---	--

Դամբարան- մատուռ- տապանատուն Զաքարյան իշխ.	12-13-րդ դդ.		շրջապարսպից դուրս՝ գերեզմանոցից ամ, Սբ. Հակոբ եկեղեցու մոտ	այստեղ թաղված են Վահրամ, Սարգիս Մեծ և Զաքարե Զաքարյանները
Ամրոց	13-րդ դ.	Ախթալա	Ախթալա կայարանի հս մասում, Դեբեդ և Ախթալա ձորերի միացման անկյունում	ավերված, ժայռոտ բլրի գագաթին
Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հազ.		քաղաքի մեջ	պեղել է Ժակ դը Մորգանը
Ամրոց Ախթալա, Վանական համա- լիր (Պղնձահանք, Միսխանա)	10-13-րդ դդ.		գյուղի մեջ, հրվանդանի վրա	
Վանական համա- լիր Սբ. Երրորդույթ.	13-րդ դ.		գյուղի կենտր. մասում, Ախթալայի վանքից 0.5 կմ հս- ան	
Հուշարձան Հ.Թումանյանի	1986 թ.	Թումանյան	քաղաքի մեջ	
Վանական Համալիր Քոբայր	12-13-րդ դդ.	Քոբայր կայարանի գ.	կայարանից հվ-ամ, Դեբեդի կիրճի բարձրադիր դարավանդների վրա	
Եկեղեցի «Չիթախանց վանք» (Չիթխավանք)	13-րդ դ.		վանքից մոտ 0.5 կմ հվ-ան, ձորալանջի հարթակի վրա	միանավ դահլիճ, կրկնահարկ Դամբարան-Եկեղեցի
Ամրոց «Ավանաքար»	14-15-րդ դդ.		Քոբեր կայարանից 5 կմ հվ	հնագիտական գտածոները պահվում են Թումանյան քաղաքի թանգարանում
Քարայր- Կացարանների համալիր	12-17-րդ դդ.		Քոբերի վանքի մոտ, ձորի բարձրադիր քարափներում	Քարայրներից մի քանիսը վերածվել են մատուռների և ճգնավորների կացարանների
Եկեղեցի	2001 թ.	Սպիտակ	քաղաքի մեջ	
Ամրոց	Ք.ա. 2-1 հազ.	Ստեփանավա ն	Արմանիս-Կաթնաղբյուր ճանապարհին	բլրակի վրա, ավերված
Եկեղեցի «Օրան- Լոռե»	12-13-րդ դդ.		քաղաքից ամ	հարթության վրա, երևում են միայն հիմնապատերը
Եկեղեցի Սբ. Սարգիս	19 դ.		քաղաքի մեջ	
Եկեղեցի «Ճգնավոր»	12-13-րդ դդ.	Ագարակ	գյուղից ան, ջրամբարից քիչ վեր, ժայռի մեջ	որպես ծածկ ծառայում է բնական ժայռը
Եկեղեցի	1910-1914 թթ.	Ամրակից	գյուղից մեջ, դպրոցի մոտ	Ռուսական
Վանական համալիր Սբ. Հովհաննես (Սրբանես, Հովհան Օձնեցու վանք)	8-19-րդ դդ., վերակառ. 17 դ., 1902 թ.	Արդվի	գյուղից 1 կմ հս, լեռան լանջին	Լորիս-Մելիքյանների և Մելիք- Քալանթարյանների տոհմական գերեզմանոցը
Պորտաքար		Արդվի	«Օձի պորտ» աղբյուրի մոտ	չբեր կանանց հրաշագործ հղիություն պարզևող քար
Սրբատեղի «Օխտը մոնթի»			համալիրի ստորին մասում, «Օձի պորտ» աղբյուրի մոտ	Ըստ ավանդության այստեղ օձի խայթից մահացել են Հովհաննես Գ Օձնեցու 7 աշակերտները
Եկեղեցի «Տորմակ»	5-6-րդ դդ.	Գյուլագարակ	Գյուղատեղիում	ավերված, միանավ սրահ, շրջափակված է եղել պարսպով
Եկեղեցի	12-13-րդ դդ.	Դեբեդ	գյուղատեղիի հս-ամ եզրին, բլրի գագաթին	Ավերված

Եկեղեցի Սբ. Գր.Լուսավորիչ	վաղ միջնադար	Դսեղ	ցյուղի կենտրոնում, Շ. Թումանյանի տուն-թանգարանի մոտ	վերակառ.՝ 13 դ. և 1900 թ, շրջապատված է քարե ցանկապատով
Սիրուն Խաչ	13-րդ դ.		Գյուղի հս-աե, Մարց գետի ձախ ափին	
Վանական համալիր Քառսնից Մանկանց վանք	11-15-րդ դդ.		ցյուղի հս-ամ մասում, Դեբեդի կիրճի աջակողմյան լանջին, «Տախտեր» վայրում	

Վանական համալիր Մանստև	13 դ.	Թեղուտ	ցյուղից 3 կմ հս-աե, Մանստև գետակի աջ ափին	Անտառում
Հուշակոթող Մեծ եղեռնի զոհերին	1977 թ.	Լեռնապատ	Բլրի վրա	Ղարաքիլիսայի ճակատամարտի վայրում
Սրբատեղի	Միջնադար		ցյուղից 7 կմ հվ, «Քիլիսա» ցյուղատեղի տանող ճանապարհի ձախ կողմում	Ժայռի վրա պատկերված են պարզ խաչեր
Քաղաքատեղի Լոռի Բերդ	11-18-րդ դդ.	Լոռի Բերդ	ցյուղից 2 կմ աե, Ջորագետ և Միսխանա գետերի միախառնման վայրում	հրվանդանի վրա
Ամրոց «Ծտաբերդ»	Ք.ա. 3-1 հազ.	Կուրթան	ցյուղից հվ-ամ, Գյառցյառ գետի ձախ ափին	
Վանական համալիր Հնեվանք	7-12-րդ դդ.		ցյուղից 4 կմ հվ-աե, Կուրթանի ձորում	լեզվակաձև հրվանդանի վրա
Ամրոց «Կայանբերդ»	1233 թ.	Հաղպատ	ցյուղի հվ-ամ մասում, հրվանդանի վրա	կառուցել է Հաղպատի վանահայր Հովհաննեսը
Դսեվանք (Դրսեվանք, Սբ. Աստվածածին)	1233 թ.		ամրոցի հվ-աե մասում, Ժայռի գլխին	կառուցել է Հաղպատի վանահայր Հովհաննեսը
Վանական Համալիր Հաղպատ	10-20-րդ դդ.		ցյուղի հվ-աե եզրին	
Քարանձավ	Ք.ա. 5-1 հազ.	Պաղաղբյուր	ցյուղից 7 կմ հվ-ամ	ներսում բխում է աղբյուր
Ժայռապատկերներ	Ք.ա. 5-1 հազ.		քարանձավի ներսում, պատերի վրա	հիմնականում կենդանիների փորագիծ պատկերներ են
Ամրոց «Միսի բերդ»	ուշ միջնադար	Վահագնաձոր	Լոռի հանգստյան տնից 7 կմ հվ-աե, բարձր քառաժայռի կատարին	
Եկեղեցի Սբ. Սարգիս	1071 թ.	Վարդաբլուր	Սբ. Սարգիս սարի գագաթի կենտրոնական մասում	
Եկեղեցի (Օձունի տաճար, Սբ. Հովհաննես եկեղեցի, Խաչգունդ վանք)	6 դ.	Օձուն	ցյուղի մեջ	գմբեթավոր, եռանավ սրահ, 19 դ. վերջին տանիքի աե մասում ավելացվել են զույգ զանգաշտարակներ
Եկեղեցի Ծիրանավոր - Ծաղկավանք	5 դ.		ցյուղի աե մասում, Դեբեդի ձորեզրին	միանավ սրահ, պահպանվել են հս և աե պատերը
Վանական Համալիր Հոռումայրի Սբ. Նշան՝ ստորին հուշարձանախումբ	10-13-րդ դդ.		ցյուղից 1.5 կմ հվ-աե, Օձուն-Այգեհատ ճանապարհից ոչ հեռու, Դեբեդի ձախափնյա ձորալանջին	ավանդությունը վանքի հիմնադրումը վերագրում է հույն Վասիլ իշխանին (8 դ.)

Գուգարաց թեմի հոգևոր առաջնորդների կողմից հիմնականում ներքոնշյալ եկեղեցիներում են կատարվում ծիսակատարություններ (նշված ամիսներին):

Հունվար – Փետրվար

Մբ. Փրկիչ եկեղեցի_գ. Ծաղկաբեր, Մեծ Պարնի, Շենավան, Գարգառ

Մբ. Հովհաննես – Կարապետ եկեղեցի կամ մատուռ_ք. Ալավերդի, գ. Ազնվաձոր, Լեռնանցք,

Մեծ Պարնի, Կաթնաջուր, Գարգառ

Մբ. Սարգիս եկեղեցի_ք. Շամլուղ, Ստեփանավան, Վանաձոր, Տաշիր, գ. Գուգարք, Լեռնապատ,

Լորուտ, Շնող, Քարինջ, Գեղասար, Մեծ Պարնի, Վարդաբլուր, Սվերդլով, Լեռնահովիտ

Մբ. Նահատակի բանք_գ. Ճոճկան

Մբ. Սահակ մատուռ_գ. Արևաշող

Մարտ – Ապրիլ

Մբ. Հովհաննես – Կարապետ եկեղեցի կամ մատուռ_ք. Ալավերդի, գ. Ազնվաձոր, Լեռնանցք, Մեծ Պարնի կամ Հարթաղյուղ, Կաթնաջուր, Գարգառ

Մբ. Հարություն եկեղեցի_ք. Սպիտակ

Մբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի_գ. Մարգահովիտ, Դսեղի Բարձրաքաշ Մբ. Գրիգոր վանք,

Հաղպատ. Արևաշող (մատուռ), Մեծ Պարնի, Լեռնապատ

Մբ. Հովհաննես Օձնեցի վանք_գ. Արդվի

Քառասնից մանկանց վանք_գ. Դսեղ

Մբ. Աստվածածին եկեղեցի_ք. Ալավերդի՝ Սանահնի վանք, Վանաձոր, գ. Ձորաղյուղ, Ծաթեր, Հագվի, Հաղպատի վանք, Դսեվանք, Ճոճկան, Շնող, Օձուն, Ամոջ, Լեռնավան, Սարահարթ, Արևաշող, Ջիլիգա, Կուրթան, Չկալով, Սվերդլով, Վարդաբլուր

Մայիս – Հունիս

Մբ. Հովհաննես – Կարապետ եկեղեցի կամ մատուռ_ք. Ալավերդի, գ. Ազնվաձոր, Լեռնանցք, Մեծ Պարնի կամ Հարթաղյուղ, Կաթնաջուր, Գարգառ

Մբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի_գ. Մարգահովիտ, Դսեղի Բարձրաքաշ Մբ. Գրիգոր վանք, Հաղպատ. Արևաշող (մատուռ),

Մբ. Գայանե եկեղեցի_գ. Նեղոց

Մբ. Երրորդություն եկեղեցի_ք. Աղթալա, Շամլուղ

Մբ. Նշան եկեղեցի_ք. Ստեփանավան, գ. Ծաղկաշատ, Լեռնապատ, Գարգառ, Շենավան, Վարդաբլուր

Հուլիս – Օգոստոս

Մբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի_գ. Մարգահովիտ, Դսեղի Բարձրաքաշ Մբ. Գրիգոր վանք, Հաղպատ. Արևաշող (մատուռ), Մեծ Պարնի, Լեռնապատ

Մբ. Աստվածածին եկեղեցի_ք. Ալավերդի՝ Սանահնի վանք, Վանաձոր, գ. Ձորաղյուղ, Ծաթեր, Հագվի, Հաղպատի վանք, Դսեվանք, Ճոճկան, Շնող, Օձուն, Ամոջ, Լեռնավան, Սարահարթ, Արևաշող, Ջիլիգա, Կուրթան, Չկալով, Սվերդլով, Վարդաբլուր

Մբ. Երրորդություն եկեղեցի_ք. Աղթալա, Շամլուղ

Քոբայրավանք_Քոբեր կայարան

Սեպտեմբեր – Հոկտեմբեր

Մբ. Հովհաննես – Կարապետ եկեղեցի կամ մատուռ_ք. Ալավերդի, գ. Ազնվաձոր, Լեռնանցք, Կաթնաջուր, Գարգառ

Մբ. Աստվածածին եկեղեցի_ ք. Ալավերդի՝ Սանահնի վանք, Վանաձոր, գ. Ձորագյուղ, Ծաթեր, Հազվի, Հաղպատի վանք, Դսեվանք, Ճոճկան, Շնող, Օձուն, Ամոջ, Լեռնավան, Սարահարթ, Արևաշող, Ջիլիգա, Կուրթան, Չկալով, Սվերդլով, Վարդաբլուր

Մբ. Նշան եկեղեցի_ք. Ստեփանավան, գ. Ծաղկաշատ, Լեռնապատ, Գարգառ, Շենավան, Վարդաբլուր

Մբ. Գրիգոր Նարեկացի եկեղեցի_ք. Վանաձոր, Ալավերդի, գ. Հարթագյուղ

Մբ. Գևորգ եկեղեցի_ք. Ախթալա, գ. Աքորի, Դուրսալի, Սարալանջ, Մեծավան

Գողգոթավանք_ք. Թումանյան

Նոյեմբեր – Դեկտեմբեր

Մբ. Աստվածածին եկեղեցի_ ք. Ալավերդի՝ Սանահնի վանք, Վանաձոր, գ. Ձորագյուղ, Ծաթեր, Հազվի, Հաղպատի վանք, Դսեվանք, Ճոճկան, Շնող, Օձուն, Ամոջ, Լեռնավան, Սարահարթ, Արևաշող, Ջիլիգա, Կուրթան, Չկալով, Սվերդլով, Վարդաբլուր

Քոբայրավանք Քոբեր կայարան

Մբ. Գաբրիել-Միքայել եկեղեցի_ գ. Լեռնապատ

Մեծ Պապ (Մբ. Նիկողայոս) _ գ. Մարց

Մբ. Հակոբ եկեղեցի_ գ. Ամոջ, Շահումյան

Մբ. Ստեփանոս եկեղեցի_ գ. Լեռնահովիտ

Հավելված 7.

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐԵՐԸ

Անվանումը	Ստեղծման թվականը	Տարածքը	Բարձր. ծովի մակարդակից	Ստեղծման նպատակը, պահպանության օբյեկտները
«Գյուլագարակի» արգելավայր	1958թ.	2576 հա	1400 – 1900 մ	Սոճու դարավոր անտառների (կան 130-150 տարեկան ծառեր), արժեքավոր ծառատեսակներ և հազվագյուտ անտառային խոտաբույսերի պահպանություն
«Մարգահովիտի» արգելավայր	1971թ.	2814 հա	1900 – 2200 մ	Անտառային կենդանիների պահպանություն
«Կովկասյան մրտավարդի» արգելավայր	1959թ.	761 հա	1900 – 2200 մ	Կովկասյան մրտավարդենու պահպանություն

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԵՆԴՐՈՊԱՐԿԵՐԸ ԵՎ ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻՆԵՐԸ

ՀՀ-ում գործող դենդրոպարկերը չորսն են՝ Ստեփանավանի «Սոճուտ», Վանաձորի «Մարուխանյանի Ժ.-ի անվան», Իջևանի «Դենդրոպարկ» և Բերդի «Սորաններ», որոնք գտնվում են ՀՀ ԲՆ «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի ենթակայության ներքո: Գործող դենդրոպարկերի հիմնումը կարելի է բաժանել երկու փուլի՝ I փուլը 1930 և II փուլը՝ 1960-ական թվականներին հիմնադրված: Առաջնաստեղծ դենդրոպարկերը ստեղծվել են Լոռու մարզում, դա բացատրվում է մի քանի հանգամանքով, որոնցից կարևորագույններն են. առաջին՝ անտառային ֆոնդի հողերի առկայությունը և բարենպաստ կլիմայական պայմանները, և երկրորդ Լոռու մարզի աշխարհագրական դիրքը, որը ավելի մոտ լինելով հարևան Վրաստանին, մասնավորապես՝ Թբիլիսիին, որտեղ բուսաբանությունը ավելի խոր արմատներ ուներ և մասնագետները հիմնականում կազմում էին տեղի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը: Հայաստանում առաջնաստեղծ են Վանաձորի և Ստեփանավանի դենդրոպարկերը:



ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ <<ՍՈՃՈՒՏ>> ԴԵՆԴՐՈՊԱՐԿ

Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկը հիմնադրվել է 1933 թվականին, ազգությամբ լեհ ինժեներանտառագետ Էդմոնդ Լեոպոլդի Լեոնովիչի անձնական ծառափայլին բույսերի կենդանի հավաքածուի հիման վրա: Դենդրոպարկը գտնվում է

Գյուլագարակ համայնքի հարևանությամբ և զբաղեցնում է 35 հա տարածք: Դենդրոպարկում աճում են շուրջ 485 ծառափայլին բույսեր և մագլցող լիաններ, պարտիզային ձևեր (<http://www.reservepark.mnp.am>):



ՎԱՆԱՁՈՐԻ ԺՈՐԱ ՄԱՐՈՒԽԱՆՆԻ ԱՆՎԱՆ ԴԵՆԴՐՈՊԱՐԿ

Վանաձորի «Վանաձոր» ներկայիս՝ «Մարուխանյան Ժ.-ի անվան» դենդրոպարկը հիմնադրվել է 1935 թվականին: Հարկ է նշել, որ այդ ժամանակահատվածում կողքկողքի հիմնադրվել է նաև Վանաձորի բուսաբանական այգին: Դրանց հիմնադրման գործում մեծ ավանդ են ունեցել Գ.Դ.Յարոշենկոն, Պ.Դ.Յարոշենկոն, Լ.Բ.Մախատաձեն, Ա.Ա.Գրիգորյանը և Ռ.Ս.Աթաբեկյանը: Գործողների մեջ Վանաձորի դենդրոպարկն իր զբաղեցրած տարածքով ամենափոքրն է՝ 1,944 հա,


բայց և այնպես չի զիջում իր ծառափայտեսակային բազմազանությամբ՝ մոտ 140 (Խալաթյան Ա.Ա., 2018):



ՎԱՆԱՁՈՐԻ ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՌԱՎԵԼ ՈՒՇԱԳՐԱՎ ԲՆԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

- Լոռու ձոր – Դեբեդի կիրճում
- «Բոլոր քար» – Վանաձորում
- «Մայրի ձոր» – Ստեփանավանում
- Մայրի քարափ» – Դսեղ գյուղի մոտ
- «Տգրուկի ջրվեժ» – Աթան գյուղի մոտ
- «Ալմաստի լիճ» – Ագարակ գյուղի մոտ
- Թռչկանի ջրվեժ – Զիչկան գետի մոտ
- Դսեղի լճերը
- Գայլաձորի կիրճը
- Ձորագետի, Փամբակի, Վանաձորի հովիտները և այլն



Թռչկանի ջրվեժ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՄԱՐ ԴԻՏԱՐԺԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԸ

Անվանումը	Գտնվելու վայրը	Ուղղվածությունը	Հակիրճ նկարագրություն
Ալավերու պղնձաձուլական գործարան	Ք. Ալավերդի	Պղինձ, մոլիբդեն	Լոռու մարզի Ալավերդի քաղաքում տեղակայված պղնձաձուլական գործարանն ու պղնձի հանքն ունեն շուրջ 240 տարվա պատմություն: Ներկայումս գործարանն աշխատում է որ ամբողջ հզորությամբ:
Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ	Ք. Ախթալա	Պղինձ, մոլիբդեն	Ախթալայի լեռնահարստացման կոմբինատն ունի 251-ամյա պատմություն:
Թեղուտի հանքավայր	Գ. Թեղուտ, գ. Շնող և հարակից տարածքներ	Պղինձ	Շահագործումը նախատեսված է մայիսին:
Վանաձորի քիմիական գործարան	Ք. Վանաձոր	Ամոնիակ, ազոտական թթու, կարբիդ, սինթետիկ կորունդ և այլն	Հիմնադրվել է 1933 թվականին, Ալավերդու կարբիդի արտադրության բազայի վրա: Ներկայումս գործարանն աշխատում է ոչ ամբողջ հզորությամբ:

**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ԳՈՐԾՈՂ
ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ**

Հավելված 11.

Հ/Հ		Անունը Տեսակը	Ղեկավարի անուն, ազգանունը	Կոնտակտային տվյալներ	Օբյեկտի գտնվելու վայրը
		Name	Director's Name	Contacts	Address
1		Hotel <<Kirovakan>>	Դավիթ Գրիգորյան Davit Grigoryan	+374 322-4-70-10, +374 98-41-70-10 hotel.kirovakan@gmail.com	Ք. Վանաձոր, Մաշտոցի 1 Building 1, Mashtots St , Vanadzor
2		Hotel <<Argishti>>	Արգիշտի Դարբինյան Argishti Darbinyan	+374 322-4-25-56 +374 95-44-25-56	Ք. Վանաձոր, Բաթումի 16 House 16, Batumi St, Vanadzor
3		Vanadzor Armenina Health Resort	Ժասմին Ամիրյան Zhasmin Amiryan	+374 322-2-01-62, +374 322-2-01-63; +374 93-76-90-63 info@vanadzorsanatorium.am	Ք. Վանաձոր, Զաքարյան 31 House 31,Zaqaryan St, Vanadzor
4		Hotel <<Laguna>>	Վահե Գյուլզադյան Vahe Gyulzadyan	+374 99-87-72-22, +374 55-87-72-22 +374 93-62-00-68 admin@laguna.am www.laguna.am	Ք. Վանաձոր, Երևանյան խճ. 68 ^ա Building 68A, Yerevanyan Highway ,Vanadzor
5		B&B <<Maghay>>	Մարինե Դավթյան Marine Davtyan	+374 322-4-52-59, +374 91-38-03-05, +374 77-09-40-29 marined61@rambler.ru www.hostelmarina.am	Ք. Վանաձոր, Ազատամարտիկների 21 House 21, Azatamartikner St ,Vanadzor
6		Hotel <<Baron>>	Արթուր Հովհաննիսյան Arthur Hovhannisyan	+374 94-09-88-40	Ք. Վանաձոր, Հալաբյան 1-1 Building 1-1, Halabyan St, Vanadzor
7		B&B <<Downtown>>	Վլադիմիր Փոթինյան Vladimir Potinyan	+374 77-02-02-99 downtownvanadzor@gmail.com	Ք. Վանաձոր, Գարեգին Նժդեհի 9 Building 9, Garegin Njdeh St ,Vanadzor
8		B&B <<Van Garden>>	Գրիգորյան Սուսաննա Grigoryan Susanna	+374 94-22-58-05	Ք. Վանաձոր, Լալվարի 30 House 30 ,Lalvar St , Vanadzor

9		Hotel <<Royal Palace>>	Միքայել Ղազարյան Michayel Ghazaryan	+374 41-85-80-80 info@royalpalace.am	Ք. Վանաձոր, Գարեգին Նժդեհի 1/2 Building 1/2, Garegin Njdeh St, Vanadzor
10		Hotel <<Green House >>	Անահիտ Հակոբյան Anahit Hakobyan	+374 91-31-00-70 greenhousehotel@yahoo.co m	Ք. Վանաձոր, Բանակի 8 ^ա House 8D, Banak St, Vanadzor
11		Guesthuse <<Masoor>>	Մեյրան Չոբանյան Seyran Chobanyan	+374 98-96-10-56 masoorvanadzor@gmail.co m	Ք. Վանաձոր, Սունդուկյան 56 House 56, Sundukyan St, Vanadzor
12		Hotel <<Royal>>	Արթուր Հովհաննիսյան Arthur Hovhannisyan	+374 94-09-88-40 royalhotelarmenia@mail.ru	Ք. Վանաձոր, Աղայան 95/1 Building 95/1, Aghayan St, Vanadzor,
13		Guesthouse <<Anahit>>	Անահիտ Մելքոնյան Anahit Melqonyan	+374 94-08-99-09	Ք. Վանաձոր, Զորավար Անդրանիկ 52 House 52, Zoravar Andranik St, Vanadzor
14		<<Bubble Park Hotel>>	Արմեն Սարուխանյան Armen Sarukhanyan	+374 94-09-56-02	Ք. Վանաձոր, Բուսաբանական 3 Busabanakan 3, Vanadzor

Գուգարքի տարածաշրջան

15		Tufenkian Avan Dzoraget Hotel	Միքայել Սեֆերյան Michayel Seferyan	+374 60-74-10-10 +374 93-94-78-89 +374 93-85-60-74 dzoraget@tufenkian.am www.tufenkianheritage.co m/	Գ. Չորագետ 1 փող. 127 շ. Building 127, St 1, Dzoraget Village,
16		<<Tezh Ler>> Resort	Վերոնիկա Հունանյան Veronika Hunanyan	+374 91-92-59-99, +374 94-92-59-99 info@tezhler.am www.tezhler-resort.am	Գ. Շահումյան, Դիլիջան մայրուղի, 2-րդ նրբ., 46. 24th km of Dilijan - Vanadzor Highway, Shahumyan Village
17		Guesthouse <<LerMont>>	Թովմաս Զաքարյան Tovmas Zaqaryan	+374 98-90-19-10, +374 55-94-77-92 lermont.guesthouse@gmail. com	Գ. Լեյրմոնտով, 1 փակուղի, փողոց 2, M8 Highway, Lermontovo Village

18		Guesthouse <<Eco Lori>>	Մագդա Օսյան Magda Osyanyan	+374 94-65-62-03 osyanm@inbox.ru	Գ. Վահագնաձոր փ. 3, տուն 9 House 9, St 3, Vahagnadzor Village
19		<<Lori Resort>>	Հակոբ Մուրադյան Hakob Muradyan	+374 93-40-10-80	Գ. Վահագնաձոր Vahagnadzor Village
20		<<Nayada>> Rest House	Հասմիկ Մնացականյան Hasmik Mnacakanyan	+374 94-97-32-48 nayada.resthouse@mail.ru	Գ. Լեւոնտով, փ 1, տ18 House 18, St 1, Lermontovo Village,
21		<<House of Fairy Tail >>	Հասմիկ Բաղրամյան Hasmik Baghranyan	+374 93-31-13-01 hasmik.tonatsuyts@gmail.com	Գ. Փամբակ, փ. 1, տուն 19 House 19, St 1, Pambak Village
22		Workation & Co. Living House	Տաթևիկ Աղաբաբյան Tatevik Aghababyan	info@debed.life	Գ. Դեբեդ Debed Village

Ք. Սպիտակ, Սպիտակի տարածաշրջան

23		Guesthouse <<YMCA>>	Ալվարդ Մկրտչյան Alvard Mkrtchyan	+374 94-16-13-00 +374 99-16-13-00 spitak@ymca.am	Ք. Սպիտակ, Այգեստան թաղամաս 170 շենք House 170, Aygestan St, Spitak
----	---	------------------------	-------------------------------------	--	---

Ք. Ստեփանավան, Ստեփանավանի տարածաշրջան

24		Resort << Lori>>	Դավիթ Ղարաքեշիշյան Sargis Gharaqeshishyan	+374 256-2-23-23, +374 93-00-11-06 info@lorihotel.am www.lorihotel.am	Ք. Ստեփանավան Անտարային 1 House 1, Antarayin St, Stepanavan
25		<<SH Resort>>	Կարինե Տոնոյան Karine Tonoyan	+374 43-12-20-07, +374 77-20-73-65, +374 91-20-73-65 shresorthotel@gmail.com	Ք. Ստեփանավան Բաղրամյան 145 House 145, Baghranyan St, Stepanavan
26		Hotel <<Nectar>>	Սուրեն Ղուկասյան Christine Khukasyan	+374 55-48-45-09, +374 55-07-02-84, +374 77-07-02-84 nek_tar@list.ru	Ք. Ստեփանավան Ավետիսյան 43, տ. 1 House 1, Avetisyan St 43, Stepanavan

27		<<Geologist's House>> B&B	Արմեն Ավետիսյան Armen Avetisyan	+374 55-77-55-85; +374 93-73-37-17 armen.avetis@gmail.com	Գ. Գարգար, 3-րդ նրբ., 7 տուն House 7, 3th deadlock, Road to Pushkino, Gargar
28		<<Getap>> Guesthouse	Ժիրայր Զալինյան Zhirayr Zalinyan	+374 93-10-03-55	Գ. Գարգար, Gargar Village
29		<<Grig House Eco Resort>>	Եղիշե Ներսիսյան Yeghishe Nersisyan	+374 91-49-77-27, +374 55-56-26-54 grighouseressort@gmail.com	Գ. Գյուլագարակ Gyulagarak Village
30		<<Lore Adventure>>	Արման Առաքելյան Arman Arakelyan	+374 98-21-82-18	Ք. Ստեփանավան, Ավետիսյան 78 Avetisyan St 78, Stepanavan
31		Hotel <<Lori>>	Սուսաննա Հովսեփյան Susanna Hovsepyan	+374 93-00-11-06	Ք. Ստեփանավան Նժդեհի 11 House 11, Njdeh St, Stepanavan
32		B&B <<Anahit>>	Լևոն Բաբուրյան Levon Baburyan	+374 98-70-67-96	Ք. Ստեփանավան, Անտարային 1 Building 1, Antarayin St, Stepanavan
33		B&B <<Gayane>>	Ժիրայր Զալինյան Zhirayr Zalinyan	+374 93-10-03-55	Գ. Գարգար /Գեոտափի հարևանությամբ/ Gargar Village, Stepanavan
34		<<Sochut>> Resort	Արթուր Ալեքսանյան Arthur Aleqsanyan	+374 60-50-11-99 +374 95-41-18-88 +374 95-41-11-95	Գ. Գյուլագարակ Gyulagarak Village, Stepanavan
35		<<Ruzanna>> B&B	Ռուզաննա Սարգսյան Ruzanna Sargsyan	+374 93-23-03-20	Ք. Ստեփանավան, Սոս Սարգսյան փ., տուն 9 House 9, Sos Sargsyan St, Stepanavan
36		<<Vahagn Resort>>	Ռուդիկ Նալբանդյան Rudik Nalbandyan	+374 93-66-25-95 +374 44-66-25-95 info@vahagnresort.am	Ք. Ստեփանավան, Անտարային 55 Building 55, Antarayin St, Stepanavan

37		Hotel <<Aleya>>	Համլետ Թումասյան Hamlet Tumasyan	+374 99-01-11-22 +374 98-66-83-22	Ք. Ստեփանավան, Բսահակյան փողոց Isahakyan St,Stepanavan
----	---	--------------------	-------------------------------------	--------------------------------------	---

Ք. Ալավերդի, Թումանյանի տարածաշրջան

38		Hotel <<Sanahin Bridge>>	Էդմոնդ Եգանյան Edmond Yeganyan	+374 253-3-17-17, +374 99-17-59-17 sanahin.bridge@mail.ru	Ք. Ալավերդի, Գայի փող. 1/12 Gay st. 1\12a, Sanahin-Sarahart, Alaverdi
39		Hotel <<Lalvar>>	Լաուրա Մելիքսեթյան Laura Meliqsetyan	+374 91-00-90-44 hotellalvar@mail.ru	Ք. Ալավերդի, Էնգելսի փող., 5 շենք House 5, Engels St , Alaverdi
40		B&B <<Iris >>	Իրինա Իսրայելյան Irina Israyelyan	+374 91-08-88-12, +374 94-89-42-92 , +374 55-89-42-92 irinaisrayelyan@gmail.com	Ք. Ալավերդի , Բաղրամյան. 65 House 65, Baghranyan St , Alaverdi
41		Hotel <<Palma>>	Ժաննա Թամազյան Zhanna Tamazyan	+374 91-06-07-63	Ք. Ալավերդի Զորավար Անդրանիկ 327 House 327, Zoravar Andranik St, Alaverdi
42		Guesthouse <<Artemi>>	Անուշ Նավասարդյան Anoush Navsardyan	+374 94-43-37-25, +374 93 62-51-01, +374 91-62-51-01	Ք. Թումանյան, Կենտրոնական փող, 5 շենք House 5, Central St, Tumanyan
43		Hotel <<Gayane>>	Սոնա Խուդինյան Sona Khudinyan	+374 99-99-47-55, +374 91-61-18-61, +374 93-41-97-05 gayanehotel@gmail.com www.gayanehotel.am	Գ. Հաղպատ, 19-րդ փող., 2-րդ նրբ., շենք 2 1 Building, 19th St. 3rd Lane, Haghpat Village
44		Hotel <Qefilyan>>	Լիաննա Գալստյան Liana Galstyan	+374 55-21-02-10 info@qefohotel.com qefohotel@mail.ru www.qefohotel.com	Գ. Հաղպատ, 19-րդ փող., 14 տուն Building 14, St 19, Haghpat Village
45		Hotel <<Odzun>>	Վահրամ Գևորգյան Vahram Gevorgyan	+374 91-71-74-04, +374 95-71-74-04, +374 94-11-77-53 hotel.odzun@gmail.com	Գ. Օձուն, 1-ին փող., 85 տուն House 85, St 1, Odzun Village

46		Guesthouse <<Aghasu Tun>>	Աղասի Նալբանդյան Aghasi Nalbandyan	+374 55-38-12-00 , +374 55-38-14-00 karmher@mail.ru	Գ. Օձուն, 4-րդ փող., տուն 10 House 10, St 4, Odzun Village
47		<<Kanchaqar>> camping	Մարտուն Ազարյան Martun Azaryan	+374 91-60-40-82 martun.azaryan@gmail.com	Գ. Հաղպատ Haghpat Village
48		Guesthouse <<Mary>>	Մարի Իսրայելյան Mary Israyelyan	+374 43-12-85-43	Գ. Հաղպատ, 33/1 տուն House 33/1, Haghpat Village
49		B&B <<Station>>	Դավիթ Միսկարյան Davit Miskaryan	+374 99-33-84-33	Սանահին կայարան, Ալավերդի Sanahin Railway Station, Alaverdi
50		B&B <<Edem>>	Եվա Դալլաքյան Eva Dallaqyan	+374 94-87-21-97	Գ. Հաղպատ, 7/1 փող, տուն 2 House 2, St 7/1, Haghpat Village
51		Guesthouse <<Alaverdi>>	Սվետլանա Գևորգյան Svetlana Gevorgyan	+374 95-92-40-20	Ք. Ալավերդի, Ջրավազան 73 Building 73, Jravazan St, Alaverdi
52		Hotel <<Old City>>	Արմեն Քեֆիլյան Armen Qefilyan	+374 41-21-42-14	Ք. Ալավերդի, Ջրավազանի 5 ^ա Building 5A, Jravazan St, Alaverdi
53		Guesthouse <<Mini House>>	Արթուր Մանուկյան Arthur Manukyan	+374 99-70-22-07, +374 55-70-27-07	Ք. Ալավերդի, Գայի 2 House 2, Gay St , Alaverdi City
54		Guesthouse <<EM&Ri >>	Էմին Հարությունյան Emin Harutyunyan	+374 98/99-00-55-21, +374 94-55-07-52	Գ. Օձուն, Փող. 3, տուն 8 House 8, St 3, Odzun Village
55		<<Mobile Guest House>>	Արմենուհի Արզումանյան Armenuhi Arzumanyan	+374 98-38-90-68	Գ. Դսեղ Dsegh Village

56		<<Armbee Honey Farm>>	Վիգեն Մնացականյան Vigen Mnatsakanyan	+374 91-33-37-43	Ք. Ալավերդի, Ջրավազանի 27/5 Jravazan 27/5, Alaverdi,
57		B&B <<Odzun>>	Սերգո Դավթյան Sergo Davtyan	+374 91-42-75-40	Գ. Օձուն փ. 22, տուն 4 Building 4, St 22, Odzun Village,
58		TUC /Tourism Unique Center/	Արփինե Հակոբյան Arpine Hakobyan	+374 91-74-33-15 tuccamp@gmail.com	Գ. Դսեղ Dsegh Village
59		Guesthouse <<Hotel Harmonia>>	Անուշ Վահրամյան Anoush Vahramyan	+374 91-21-16-11 info@hotel-harmonia.am	Գ. Շնող. փ 2, տ. 670 House 670, St 2, Shnogh Village
60		Guesthouse <<Arima>>	Վահրամ Բեժանյան Vahram Bejanyan	+374 77-08-16-88 Vahram1988@mail.ru	Գ. Դսեղ. փ 4, տուն 32 House 32, St 4, Dsegh Village,
61		Guesthouse <<CHEZ GARO>>	Սեդա Անտանեսյան Seda Antanesyan	+374 93-40-50-46 +374 43-18-31-36	Գ. Հաղպատ, փ 10, տուն 7 House 7, St 10, Haghpat Village,
62		Hotel <<Haghpat>>	Մարինե Կարապետյան Marine Karapetyan	+374 253 6-07-03 +374 99 24-92-49 +374 91 80-62-79 haxpat.hotel@mail.ru	Գ. Հաղպատ 3, տուն 1/1 House 1/1, St 3, Haghpat Village,
63		Guesthouse <<Olya>>	Օլինկա Տիտանյան Olinka Titanyan	+374 91-37-51-95	Գ. Օձուն, փ 1, 5-րդ նրբանցք, տուն 6 house 6 ,Street 1, lane 5, Odzun
64		Pottery House Armenin	Ալլա Ավետիսյան Alla Avetisyan	+374 93 71-04-88 potteryhousearmenia@gmail.com	Ք. Ալավերդի, Սանահին թաղամաս Sanahin Station, Alaverdi
65		<<Family Guesthouse>>	Մարգարիտա Մնացականյան Margarita Mnacakanyan	+374 91-79-54-41	Ք. Ալավերդի, Սանահին թաղամաս, տուն 38 House 38, Sanahin Station , Alaverdi

ԱՂՅՈՒՄԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

- Աղյուսակ 1. Լոռու և Տավուշի մարզերի ընդհանուր բնութագիր՝ բնակչություն, տարածք, քաղաքներ, գյուղեր
- Աղյուսակ 2. Լոռու և Տավուշի մարզերի 2018-2018թթ.-ի ծառայությունների ծավալները
- Աղյուսակ 3. Լոռու և Տավուշի մարզերում 2015-2018թթ.-ի կացության և հանրային սննդի կազմակերպման ծավալների համեմատություն
- Աղյուսակ 4. Լոռու և Տավուշի մարզերում 2015-2018թթ.-ի մշակույթի, զվարճությունների, հանգստի կազմակերպման ծավալների համեմատություն
- Աղյուսակ 5. Լոռու և Տավուշի մարզերում 2015-2018թթ.-ի տեղեկատվության և կապի ծավալների համեմատություն
- Աղյուսակ 6. Լոռու և Տավուշի մարզերում 2015-2018թթ.-ի տրանսպորտի ծառայությունների ծավալների համեմատություն
- Աղյուսակ 7. Լոռու և Տավուշի մարզերում 2015-2018թթ.-ի սպասարկման այլ ծառայությունների ծավալի համեմատություն
- Աղյուսակ 8. Լոռու և Տավուշի մարզերում 2017թ. Թանգարանների այցելուների թվաքանակը
- Աղյուսակ 9. Մարզային և համայնքային ենթակայությամբ գործող մշակութային կազմակերպությունների բաշխվածությունն ըստ Լոռու և Տավուշի մարզերի 2018թ.
- Աղյուսակ 10. Լոռու և Տավուշի մարզերում հյուրանոցային տնտեսությունների թիվ
- Աղյուսակ 11. Ձեռներեցների սեփական կարողությունների գնահատման աղյուսակ

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ

- Գծապատկեր 1. Լոռու զբոսաշրջության զարգացման հնարավորությունների հետազոտության նպատակները
- Գծապատկեր 2. Լոռու մարզում զբոսաշրջային ծառայությունների ակտիվացմանը խոչընդոտող խնդիրները
- Գծապատկեր 3. Վերջին 1 տարվա ընթացքում Հայաստանում արդյոք մեկնել եք հանգստի/արշավի/զբոսաշրջության 1 ցերեկով կամ առավելագույնը 1-2 գիշերակացով
- Գծապատկեր 4. ՀՀ-ի տարածքում ուր եք մեկնել վերջին 1 տարվա ընթացքում 1 ցերեկով
- Գծապատկեր 5. Ըստ բնակության վայրի՝ գերադասելի ուղղությունները տարբեր են, Լոռի Տավուշ
- Գծապատկեր 6. Ուր եք մեկնել վերջին 1 տարվա ընթացքում Հայաստանում 1-2 գիշերակացով
- Գծապատկեր 7. Ըստ տարբեր բնակավայրերի, դարձյալ առկա են տարբերություններ, Լոռի Տավուշ
- Գծապատկեր 8. Տուրօպերատորների հիմնական ուղղությունները Լոռու մարզում
- Գծապատկեր 9. Լոռու մարզ ՀՀ քաղաքացիների կողմից ամենաշատ այցելված վայրերը 2019թ.
- Գծապատկեր 10. Լոռու մարզում զբոսաշրջության հեռանկարային տեսակները
- Գծապատկեր 11. Վանաձոր քաղաքում զբոսաշրջության զարգացմանը խոչընդոտող խնդիրները
- Գծապատկեր 12. Համայնքի ուժեղ կողմերը և հնարավորությունները

- Գծապատկեր 13. Արկածային տուրիզմի տեսակների հեռանկարային զարգացումը Լոռու մարզում
- Գծապատկեր 14. Առողջարանային ներուժ
- Գծապատկեր 15. Լոռու մարզում ագրոտուրիզմի զարգացմանը միտված արարողություններ
- Գծապատկեր 16. Լոռու մարզում էկոզբոսաշրջության համար ստեղծվել են հետևյալ պայմանները
- Գծապատկեր 17. Հայաստանում 1-2 գիշերակացով ավելի հաճախ ինչ նպատակով եք մեկնել
- Գծապատկեր 18. Հայաստան ժամանած միջազգային զբոսաշրջիկների թիվ
- Գծապատկեր 19. Հայաստանի ներքին զբոսաշրջիկների թիվ
- Գծապատկեր 20. Հյուրանոցային տնտեսության օբյեկտները
- Գծապատկեր 21. Եթե վերջին 1 տարվա ընթացքում հանգստացել եք 1-2 գիշերակացով, ապա որտեղ եք գիշերել
- Գծապատկեր 22. Վերջին 1 տարվա ընթացքում գիշերել եք հյուրատանը
- Գծապատկեր 23. Իջևանած հյուրատան պայմանների գնահատում
- Գծապատկեր 24. 1-2 գիշերակացով սոց. Փաթեթի շրջանակներում որտեղ եք հանգստացել
- Գծապատկեր 25. 1-2 գիշերակացով հանգստի/արշավի համար հյուրանոց/հյուրատուն կամ այլ կացարան ընտրելիս ինչն եք կարևորում
- Գծապատկեր 26. Հյուրանոցի/հյուրատան զարգացմանը նպաստող գործողություններ
- Գծապատկեր 27. Լոռիում երկարաժամկետ տուրերի հնարավոր տեսակները
- Գծապատկեր 28. Զբոսաշրջության ոլորտի ավանդը Լոռու մարզում

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

- Հավելված 1. Լոռու մարզի տոնակատարությունները
- Հավելված 2. Լոռու մարզում գործող թանգարանները
- Հավելված 3. Լոռու մարզի կամուրջները
- Հավելված 4. Լոռու մարզի աղբյուրները և հուշաղբյուրները
- Հավելված 5. Լոռու մարզի աղբյուրները և հուշաղբյուրները
- Հավելված 6. Լոռու մարզի ուխտատեղերը
- Հավելված 7. Լոռու մարզի պետական արգելավայրերը
- Հավելված 8. Լոռու մարզի դենդրոպարկերը և բուսաբանական այգիները
- Հավելված 9. Լոռու մարզի առավել ուշագրավ բնական հուշարձանները
- Հավելված 10. Լոռու մարզի զբոսաշրջության համար դիտարժան արդյունաբերական գործարաններ
- Հավելված 11. Լոռու մարզում գործող հյուրանոցային տնտեսությունների տվյալները

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂՔՑՈՒՐՆԵՐԸ

1. Լոռու մարզի զբոսաշրջության զարգացման հնարավորությունների հետազոտություն 2014թ.
2. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, www.armstat.am
3. Լոռու մարզպետարանի կայք էջ- www.lori.mtad.am
4. Լոռու Տուրիզմի Զարգացման և Հետազոտության կենտրոնի կատարած հետազոտությունների արդյունքներ, 2019թ.
5. Լոռու այցելուների տեղեկատվական կենտրոնի ֆեյսբուքյան էջ
6. Թուֆենկյան հյուրանոցի կայք էջ- www.tufenkianheritage.com
7. ՀՀ Տավուշի մարզի զբոսաշրջության զարգացման հայեցակարգ 2019-2024 թթ.
8. ՀՀ Լոռու մարզի 2017-2025 թթ զարգացման ռազմավարություն
9. Լոռու մարզի ռեկրեցիոն ռեսուրսները և նրանց դերը՝ մարդկանց առողջության վերականգման գործում, www.vsu.am
10. <<Հետք >>հետաքննող լրագրող, www.hetq.am
11. Գաստրոզբոսաշրջությունը որպես ՀՀ զբոսաշրջային ներուժային ուղղություն- ՀՊՏՀ կայք էջ
12. Գյուղական զբոսաշրջություն՝ բացահայտված ներուժ, www.ankakg.com
13. UNDP in Armenia ֆեյսբուքյան էջի նյութեր, Hiking Trails
14. ՀՀ Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանի հարցազրույցը << Միջազգային հարաբերություններ,Հայկական աշխարհ ամսագրին>>
15. Քարինջի բնական կյանքի ու սոցիալ-տնտեսական աղետը , Business for business, www.b4b.am
16. Վիքիպեդիա- <https://hy.wikipedia.org/>
17. Հայաստանի հյուրանոցային ոլորտը. Ինչ ունենք այսօր , www.hetq.am
18. Հյուրատնային ոլորտը Հայաստանում. Ամփոփ ակնարկ, www.smednc.am
19. Խլղաթյան Ա.Ա.- Դենդրոպարկերի հիմնադրումը, աշխարհագրական տարածումը և էկոլոգիական նշանակությունը ՀՀ
20. Հուշարձանների մասին տեղեկատվության համար հիմք է ընդունվել «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին ՀՀ կառավարության» 04.12.1995թ. օրենքով սահմանված բնակավայրերի կառուցվածքը և համարակալումը հաստատող նորմատիվա-օրենսդրական փաստաթուղթը: